

*Handwritten mark*

“Droschak”

ORGANE

de la F. R. A.;

“Daschnaktzoutioum”

# ԴՐՕՇԿԿ

Adresse :

Rédaction du Journal

Droschak

GENÈVE (Suisse)

## “ՀՈՑ ՅԵՂՍՏՓՈՒՍԵԿԱՆ ԳՆՃՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### ԴՆԱԴԱՂ ԲԱՅՑ ԱՊԱՀՈՎ

Յայտնի է, թէ յոռետեսութեան ի՞նչ ծանր միջոցորտի մէջ տեղի ունեցաւ Ա. Ը. Ինտերնասիոնալի վերակազմութիւնը: Երկրորդ Ինտերնասիոնալի փլատակներից բարձրացած այս միջազգային հաստատութիւնը կոմունիստների կողմից որակւում էր իբրև մի մեռելածին էակ, որին կեանք ներշնչել անկարող պիտի լինէին աշխարհիս բոլոր գորութիւնները: Նոյն կարծիքին էր նաև բուրժուական հասարակութիւնը: Նա հաւատացած էր, որ բաւական է քիչ-շատ լուրջ միջազգային մի կնճիտ, որ պէտքի այս կազմակերպութեան մէջ համախմբուած ուժերն իրար անցնին, ինչպէս այդ եղաւ նախորդի մէջ: Վերջապէս քիչ չէր թիւր և այն ընկերվարականների, որոնք թերահաւատութեամբ վերաբերելով հակամարտ կուսակցութիւնները «թքով կպցնելու» ճիգերին՝ պնդում էին, թէ Ինտերնասիոնալի վերականգնումը վաղաժամ է, որովհետև դրա անհրաժեշտութիւնը հոգեբանորէն հասունացած չէ աշխատաւորական զանգւածների գիտակցութեան մէջ:

Ձի կարելի ասել, թէ այս համատարած յոռետեսութիւնը միանգամայն անհիմն էր: Ձիստադադարից յետոյ միջազգային աշխատաւորութիւնը յանձնեա իր քաղաքական կուսակցութիւնների աւելի էր պառակտւած, քան նոյն իսկ պատերազմի միջոցին: Պատերազմը մի կողմից բաժանելով իրարից տարբեր երկրների աշխատաւորներին, իսկ միւս կողմից իւրաքանչիւր երկրում կազմալուծելով կամ անդամալուծելով աշխատաւորական կազմակերպութիւնները՝ անուղղակիորէն զսպիչ դեր էր կատարում ընկերվարական կուսակցութեանց տարածաշրջանների խնդրում: Սակայն զինադադարից յետոյ, երբ յարաբերութիւնները Ինտերնասիոնալի հառաժանների միջև վերահաստատուեցին, և զինադադարական բանակների մէջ ցրւած աշխատաւորութիւնը վերագաճնալով տուն նորից նւիրւեց իր կազմակերպական աշխատանքներին՝ ընկերվարա-

կան կուսակցութեանց ներքին հակամարտութիւններն ու միջազգային տարածաշրջաններից դրսեւորւեցին շտեմնուած թափով:

Այս հակամարտութիւնների հողի վրայ կուսակցութիւնները պառակտուեցին Գերմանիայում, Ֆրանսայում, Իտալիայում, Իտալիայում, Իտալիայում և բազմաթիւ այլ երկրներում: Մի շարք կուսակցութիւններ էլ— ինչպէս օրինակ անգլիականը,— թէև պաշտօնական պառակտման աստիճանին չհասան, բայց այնքան էին ջլատել ներքին հակադիր ուժերի բզբտումներից, որ փաստորէն անդամալուծ վիճակի էին դատապարտւած: Էլ չենք խօսում այն վէճերի և պայքարների մասին, որ տարբեր երկրների կուսակցութիւնները վարում էին իրար դէմ՝ զլիսաւորապէս պատերազմի մեղակցութեան, «քաղաքացիական խաղաղութեան» (Burgfrieden) և յարակից հարցերի շուրջը:

Այս ժխորից դուրս գալու համար 1919 թւին երկու անգամ ընկերվարական կուսակցութիւնների խորհրդաժողով գումարուեց, առաջինը Փետրաբրին՝ Բեռնում, իսկ երկրորդը Օգոստոսին՝ Լիւցերնում: Սակայն այդ խորհրդաժողովները ոչ միայն առաջադրած նպատակին չհասան, այլև բոլորովին հակառակ արդիւնք տւին: 1919ի վերջերին պաշտօնապէս անջատուեցին երկրորդ Ինտերնասիոնալից դերմ. Անկախ Ընկերվարականները, անգլ. Անկախ Աշխատաւորական կուսակցութիւնը, աստոր. Սոցիալ-Դեմոկրատիան, Ֆրանսայի, Իտալիայի, Լեհաստանի և մի շարք այլ երկրների ընկերվարական կուսակցութիւնները: Անջատուած կուսակցութիւնները յաջորդ տարին որոշեցին կազմել մի առանձին Ինտերնասիոնալ, որ յայտնի է Երկուսկէն կամ Վէճնայի Ինտերնասիոնալ անունով— որով պառակտումը ընկերվարական կուսակցութիւնների մէջ կատարեալ եղաւ:

Սակայն 1921 թուի վերջերից սկսած ծայր է տալիս մէկ ընդհանուր սթափումն աշխատաւորական զանգւածների մէջ, որ աստիճանաբար զարգանալով՝ 1922 թւին ձեւաւորոււմ է՝ իբրև մի հրամայական պահանջ՝ միջազգային աշխատաւոր-

ըական շարժման միութիւնը ինչ գնով ուզում է լինի գլուխ բերելու: Միացման այս պրոցէսը շոշափնիորեմ սկսում է Նիւրնբերգում, ուր 1929 թ. աշնանը գերմանական ընկերվարական կուսակցութիւնները միանում են, և վերջումը Համբուրգում: ուր, յաջորդ տարին, հիմնադրում է Ա. Ը. Ինտերնասիոնալը: Ի հարկէ այստեղ պայմանական ձեւով պէտք է հասկանալ միացման պրոցէսի վերջնալը. որովհետև հենց Համբուրգի օրերին էլ դեռ ևս այնքան շատ էին ներքին անհարթութիւնները ընկերվարական կուսակցութիւնների ներսը և այնքան կոնոտո նրանց միջազգային յարաբերութիւնները, որ նորակազմ Ինտերնասիոնալի կենտունակութիւնը շատերին առնուազն կասկածելի էր թւում:

Արդ, Մարսէլլի համագումարը եկաւ, եթէ ոչ վերջնականապէս, գէթ խիստ զգալի չափերով փարատելու այս կասկածները: Կուսակցութիւններն այնտեղ հանդէս եկան աւելի՛ մօտեցած իրենց քաղաքական ըմբռնողութիւններով, աւելի՛ զիտակից այն պատմական դերին, որ Ինտերնասիոնալը կոչւած է կատարելու մարդկային ցեղի ազատագրման գործում՝ և աւելի՛ տողորւած պարտաճանաչութեան զգացմունքով, որ իւրաքանչիւր կուսակցութիւն անհրաժեշտօրէն պէտք է տածի Ինտերնասիոնալի հանդէպ, եթէ ցանկանում է, որ վերջինս արդարացնէ իր վրայ դրւած յոյսերը:

Եթէ այս յառաջադիմութիւնը որոշ չափով արդիւնք է առարկայական պայմաններէ— որոնց մէջ անշուշտ ամենակարեւոր տեղն է բռնում այն հանգամանքը, որ յետպատերազմայ յեղափոխական շարժումներից պահ մը հնարեկամ է սմբած կապիտալիզմը վերսկսել է իր յարձակողական քաղաքականութիւնը աշխատաւորութեան դէմ— ապա չի կարելի ուրանալ, որ նա մի խոշոր չափով էլ արդիւնք է այն տակտին, որով Ինտերնասիոնալի Գործադիր կոմիտէն և Բիւրօս վերջին երկու տարւայ ընթացքում վարել են գործերը: Նրանց քաղաքականութեան հիմնական գիծն է եղել չնրահել այն ինդիւիները, որոնց շուրջը դեռ ևս անհնարին է համաձայնութիւն կայացնել կուսակցութիւնների միջև և ընդհակառակն առաջ քաշել այն հարցերը, որոնք փոխադարձ զիջումներով կարող են կարգադրուել: Այս քաղաքականութեան նպատակն է աստիճանաբար Թեմպացնել կուսակցութիւններին միացնող միջազգային շաղխը և նախապատրաստել նրանց աւելի՛ խոշոր զիջումների և զոհողութիւնների համար:

Մարսէլլի համագումարն էլ մօտաւորապէս նոյն ընթացքն ունեցաւ, որովհետև նա գիտակցում էր,

որ Ինտերնասիոնալը թէև Համբուրգի համագումարից ի վեր խիստ զգալի յառաջադիմութիւն է կատարել, բայց և այնպէս դեռ չի յաղթահարել իր ներքին բոլոր դժուարութիւնները և չի կարող դիտուել իբրև մի կուս կազմակերպութիւն, որը ընդունակ է ոչ միայն դիմանալ միջազգային կեանքի փոփոխիչներին, այլ և զեկամտարել աշխատաւորական գոյնազածները այդ փոփոխիչների դէմ: Այսպիսի մի վիճակի հասնելու համար նա կարիք ունի երկարատեւ և շրջահայեց աշխատանքի:

Ինտերնասիոնալի այս դրութեամբ է բացատրւում այն հանգամանքը, որ մի շարք լուրջ քաղաքական հարցեր Մարսէլլում կամ քննութեան չդրւեցին և կամ դրւելով տարտամ ձեւակերպութիւն ստացան:—

Այսպէս օրինակ աշխարհակալ պետութիւնների քաղթային քաղաքականութիւնը, որ ժամանակակից միջազգային հակամարտութիւնների ամենակարեւոր առանցքներից մէկն է կազմում՝ քննութեան չառնեց այնտեղ, այլ յետաձգեց առաջիկայ համագումարին: Առարկայօրէն այս յետաձգումն արդարանում է նրանով, որ հարցը շատ բարդ է և մանրագնին ուսումնասիրութեան կարօտ: Կոմիտէնստների համար նրա ձեւակերպութիւնը պարզ է, ի հարկէ. —պէտք է աշխարհակալ պետութիւնները հեռանան գաղութներէ, որպէսզի այնտեղի ժողովուրդները կարողանան ազատ և անկախ ապրիլ: Սա հարցի լուծման այն դիրքին ձեւն է, որ նրանք կիրառեցին և Տանկահայաստանի վերաբերմամբ 1917-ին, պահանջելով, որ ռուս զօրքերը հեռանան այնտեղից, որպէսզի տանկահայ ժողովուրդն անկախանայ... Այսպիսի պարզ ձեւակերպութեամբ չէ ներկայանում խնդիրը ընկերվարականներին, որոնք պարտաւոր են լրջօրէն ուսումնասիրել գաղութներից հեռանալու քաղաքական եւ տնտեսական հետեւանքները և մանաւանդ պարտաւոր են մտածել այն մասին, թէ ինչ կր լինի գաղութաքնակ ժողովուրդների քաղաքական և կուլտուրական վիճակը, եթէ պետութիւնները թողնեն նրանց իրենց բաղդին: Սակայն միայն այս դժուարութիւններով չի պայմանաւորում հարցի յետաձգումը, այլ նաև այն կարեւոր հանգամանքով, որ ընկերվարական կուսակցութիւնները դեռ չեն կարողացել մի այնպիսի ընդհանուր տեսակէտ որդեգրել այս խնդրում, որ կարելի լինի գործնական քաղաքականութեան հիմք դարձնել ամբողջ Ինտերնասիոնալի համար:

Նոյն հանգամանքով պէտք է բացատրել և այն տարտամ ձեւակերպութիւնը, որ ստացաւ Մարսէլլի համագումարում այսպէս կոչուած առուսական:

խնդիրը» կամ աւելի ճիշտը բողոքելով ինչդիրը: Մինչդեռ կուսակցութիւններից ոմանք անվերապահօրէն բացասական վերաբերմունք ունին դէպի բողոքելովը և նաուցլու պէս պնդում են, որ նա մեր օրերի ամենասու հակայեղափոխութիւնն է հանդիսանում, որի դէմ բոլոր միջոցներով պէտք է պայքարեն ընկերվարականները, միւսները Օտտո Ֆաուլերի պէս դեռ շարունակում են բողոքելովին յեղափոխական եւ յեղափոխականացող յատկութիւններ վերադրել եւ անթոյլատրելի են համարում նրա դէմ բռնի միջոցներ կիրառելը: Հասկանալի է, ի հարկէ, որ նման պայմաններում անկարելի է այս կամ այն ձեւի վճռական խօսք ասել առաջադրած հարցի մասին, առանց խոշոր անհարթութիւնների եւ մաքառումների դուռը բանալու ինտերնասիոնալի համար:

Այս բոլորով հանդերձ Մարտէլլի համագումարը ինտերնասիոնալի կենսունակութեան տեսակէտից մի խոշոր փաստ է հանդիսանում: Նրան մասնակցող կուսակցութիւնները մի շարք կարեւոր քաղաքական կէ տնտեսական խնդիրներում երեւան բերին մտքի եւ կամքի այնպիսի ներդաշնակութիւն, որ մի քանի տարի առաջ անիրազորձելի երազ կարող էր համարել: Այդ խնդիրներից են, պատերազմի վտանգի դէմ պայքարելը, ընդհանուր զենքնկէցութիւնը, բռնի դաշնագրերի վերաքննութիւնը, Ազգերի Լիգայի վերակազմութիւնը, ազգերի ինքնորոշման իրաւունքի պահանջը, ազգային փոքրամասնութեանց իրաւունքների ապահովումը, պատերազմական հատուցումների կարգադրութիւնը, Վաշինգտոնի համաձայնագրի վաւերացումը եւն. եւն: Համագումարի որոշումներն այս խնդիրների մասին — գրեթէ բոլորն էլ միաձայնութեամբ ընդունւած — կուսակցութիւնների համար գործակցութեան մի ընդարձակ ասպարէզ են բանում եւ դրա հետ միասին վեր հանում այն հսկայական դերը, որ վիճակւած է կատարելու ինտերնասիոնալին միջազգային քաղաքական կեանքում:

Ինտերնասիոնալի վերակազմութեան այս դանդաղ ընթացքը եւ նրա մարմինների շրջահայեացութիւնը քաղաքական խնդիրների մէջ՝ անկասկած դուր չեն գայ այն մարդկանց, որոնք Ռլանկիի հետեւողութեամբ, բոլոր Գործչան հանգոյցները թրով կտրելու մէջ են տեսնում քաղաքական իմաստութիւնը: Նրանց դուր չի գալ յատկապէս, որ ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէն կամ Բիւրօն չեն վստահում առանց այլեւայլութեան իրենց կամքը պարտադրել կուսակցութիւններին, ինչպէս այդ անում է դիցուք Կոմիտէնի տակաւն ինտերնասիոնալի Բիւրօն, կամ մինչեւ իսկ նրա նախագահը:

Սակայն ինտերնասիոնալի այս զգուշաւորութիւնը ըստ արժանոյն զնահատելու համար պէտք է նկատի ունենալ, որ ժամանակակից ընկերվարական կուսակցութիւնները ոչ միայն գաղափարաբանութեամբ այլ եւ իրենց ընկերային եւ կուլտուրական վիճակով շատ են տարբերում այն բլանքիստական կազմակերպութիւններից, որոնց վրայ իշխում է Երրորդ Ինտերնասիոնալի Բիւրօն: Այս կազմակերպութիւնները մի բեւեռում ներկայացնում են սակաւաթիւ գիտակից և գործօն մարդկանց մի խմբակ, որ իր ձեռքին է պահում կուսակցութեան բովանդակ դեկավարութիւնը, իսկ միւս բեւեռում անգիտակից, կրաւորական մի զանգւած, որ միայն հրամանի է սպասում տեղից շարժելու համար՝ առանց իրաւունք իսկ ունենալու տրւած հրամանի քննութեան մէջ մտնելու:

Բոլորովին այլ է պատկերը ընկերվարական կուսակցութիւնների մէջ Այստեղ, երկրորդ բեւեռում, գորշ զանգւած չկայ, որ հլու-հնազանդ համակերպի ղեկավարների կողմից իր գլխին կատարուող ամէն մի փորձի, այլ մեծ մասամբ գիտակից անհատների մի բազմութիւն, որ համաձայն «ամէն ինչ ժողովրդի համար և ժողովրդի միջոցով» սկզբունքի՝ պահանջում է կուսակցութեան ղեկավարութիւնից բոլոր կարեւոր հարցերում հաշի առնել իւր տրամադրութիւնները կուսակցական դեմոկրատիայի այս կոնտրոլ ղեկավարների վրայ բնականաբար պէտք է զանդազեցնի շարժման ընթացքը բայց նա դրա հետ միասին ունի այն առաւելութիւնը, որ շարժումը զերծ է պահում պատահականութիւններից: Այն ոստոստումները ձախից աջ և աջից ձախ, որ պարբերաբար կատարում են օրինակ առաւ բողոքիւնները, միանգամայն անհնարին կը լինէր, եթէ նրանց առաջնորդները իրենց զիմացն ունենալին իր պատմական դերին գիտակից և իր քաղաքական քայլերը չափող-կշռող կուսակցական զանգւած:

Արդ քանի որ ընկերվարական ինտերնասիոնալը համապատասխան կուսակցութիւնների միութիւնն է հանդիսանում, հասկանալի է, ի հարկէ, որ նա պարտաւոր է հաշի առնել աշխատաւորական — ընկերվարական զանգւածների տրամադրութիւնները և այն էլ ոչ միայն մի երկրում այլ բազմաթիւ երկրներում: Այս հանգամանքը եթէ մի կողմից թուլացնում է նրա յեղափոխական թափը, միւս կողմից նրա գոյութիւնը զնում է այնպիսի ամուր հիմքերի վրայ, որոնք ամէն հողմից չեն շարժւում եւ ոչ էլ ամէն փոթորիկից տատանւում:

Այս անկիւնագծից գիտելով Ա. Ը. Ինտերնասիոնալի պատմութիւնը սկսած նրա վերակազմութեան առաջին օրերից մինչեւ Մարտէլլի համագումարը, մենք տեսնում ենք, որ նա դանդաղ, բայց

ապահով քայլերով, առանց զգայացունց թոհչե-  
 ների, բայց և առանց գլխապառոյտ վարէջքի, տրո-  
 ելով և վերացնելով իր ներքին անհարթութիւն-  
 ներն ու դժարութիւնները, անյողդողդ քայլերով  
 դիմում է դէպի շախմատորական շարժման կա-  
 տարեայ միութիւնը միջազգային գետնի վրայ: Այս  
 աստիճանական վերջէի մէջ Մարտէլլի համագո-  
 մարը այն հանգրւաններից մէկն է հանդիսանում,  
 որի վրայից լուծվեամբ չի կարող անցնել ապագայ  
 պատմաբանը:

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը

ե՛

### Ի Բ Հ Ա Ր Ե Ի Ա Ն Ն Ե Ր Ը

Ժողովրդների քաղաքական վիճակը մեծապէս կախւած է այն ջրջապատից, որի մէջ գտնուում են նրանք: Հայ ժող-  
 վրի քաղաքական դրութիւնը ճիշտ ըմբռնելու, ապագայի ան-  
 սխալ ուղիներ գծելու համար, ամենից առաջ պէտք է հարչի  
 առնել այն ուժերը, որոնց կողքին ապրում է նա և որոնց  
 կեանքին պէսպէս թիկերով կապւած է իր կեանքը:

Հայաստանի Հարեւաններին կարելի է բաժանել երկու  
 կարգի.— Նախ՝ այն ժողովուրդները, որոնց հետ մեր յարաբե-  
 րութիւնները բոլորովին պարզ են: Դրանք են Պարսիկները և  
 Թուրքերը: Պարսկաստանի և Հայաստանի միջև չկան վիճիկ  
 լուրջ խնդիրներ. սահմանները որոշ են և երկուստեք ճանաչ-  
 ւած, բարեկամութիւնը, կարելի է ասել, բնական է, երկու  
 կողմի համար էլ օգտակար և անհրաժեշտ: Տնտեսական մի  
 շարք առկախ մնացած հարցեր (տրանզիթ. ևն.) կը լուծեն  
 առանց դժարութեան, Հէնց որ Հայաստանը դառնայ միջազ-  
 գային իրաւունքի անկախ անձնաւորութիւն: Այն անկեղծագ-  
 հումակրանքը, որ պարսիկ ժողովուրդի իր բոլոր խաւերով ցոյց  
 տաւ դէպի հայ ժողովուրդն ու Հայաստանը վերջինիս  
 անկախութեան ջրջանում և շարունակում է ցոյց տալ այսօր  
 էլ, գրաւական է, որ ապագայում էլ երկու ժողովուրդների  
 միջև բարեկամութիւնը կը լինի անկեցծ և անակախ:

Որոշ է փոխյարաբերութիւնը նաև Թուրքիայի ու Հայաս-  
 տանի միջև: Թուրքիայի անհաշտ և թշնամեղա նընթացքը  
 դէպի բոլոր հայերն անխաբի, մինչև այժմ փակել է հտակացո-  
 դութեան ամէն դուռ: Ամէն անգամ, երբ հայկական ջրջաննե-  
 բում առաջ են եկել տարրեր, որոնք փորձել են փնտռել հայ-  
 թրքական արիւնստ կնճիւղը լուծելու համար խաղաղ միջոց-  
 ներ, նրանց ձեգբըը հանդիպել են թուրք ղեկավարների բացա-  
 յայտ թշնամանքին և յօդ են ցնդել: Այսօր էլ տակաւին  
 Հայերն ու Թուրքերը կազմում են երկու Հակամարտ բանակ-  
 ներ, որոնք բոլոր ձակաոնեկում կեանքի և մահուան կռիւ են  
 մղում միմեանց դէմ: Այդ կռիւը բղետաւոր է երկու կող-  
 մերի համար էլ, բայց նա չի կարող վերջանալ, մինչև որ  
 Թուրքիայի մէջ էլ ծափի և ընդհանրաւայ այն գիտակցութիւ-  
 նը, թէ հայ ժողովրդի արդար պահանջները պէտք է բաւա-  
 րարեն:

Հայաստանի երկրորդ կարգի հարեւանները նրանք են,  
 որոնց շահերը իրար հետ ամենատեսաւ կապերով միացած լի-  
 նելով հակեղծ՝ դեռ ևս չունին բոլոր կողմերի համար էլ  
 ընդունւած, հարեւանաւ սահմաններ, համակեցութեան որոշ  
 ձևեր և փոխադարձ շահերի ճիշտ գիտակցութիւն: Այդ ժող-  
 վուրդներն են, զորքէջացիք ու վրացիները հիւսիսում և քրդե-  
 լը հարւում:

Քրդերը դեռ ևս պիտական կեանքով չեն սուրբել, զբա-  
 նւում են ազգային զարթոնքի սկզբնական ջրջանում և չունին  
 բանաձևւած, որոշ և հանրապարտապիւր ազգային-քաղաքական  
 ծրարքի. այդ պատճառով Հայ-քրդական փոխյարաբերութիւ-  
 ների ձևակերպման գործը մնում է ազագայի խնդիր: Հոկա-  
 աւակ այն հանգամանքին, որ երկու կողմերն էլ բազմաթիւ  
 ծանրակշիւ հարցերով կախուած են միմիանցից, դեռ շատ ջուր  
 կը հոսի, երեկ, մինչև որ Հայ-քրդական հտակացութիւնը  
 դառնայ գործոն փաստ:

Այդ է դրութիւնը վրացիների և արքրէջանցիների նկատ-  
 մամբ. այսօրից գիտակցութիւնը չէ որ բացակայում է, Ընդ-  
 հակառակը, Հայաստանի Հարեւան այս երկու ժողովուրդները  
 ունին միանգամայն յտակառ ազգային գիտակցութիւն ու քաղա-  
 քական ծրարքներ, դեռ երէկ ապրում էին սեփական պե-  
 տական կեանքով և այսօր էլ շարունակում են պայքարիլ յա-  
 նուև անկախութեան վերականգման: Բոցի այդ, միջանկը կայ  
 նրանց և Հայաստանի փոխյարաբերութեանց հարուստ փորձ  
 և աւտոմիթ, անցեալից գնահատութեան և ապագայի լաւագոյն  
 յարաբերութիւնների մշակման համար: Միւս կողմից, այս  
 երեք ժողովուրդների աշխարհազորական, տնտեսական և ազգա-  
 ղական պայմանները այնպէս են, նրանց կեանքը այնքան  
 սերտ կերպով կապուած է միմիանց հետ, որ մէկի բարեկեցու-  
 թիւնը գծուար է երեւակայել առանց միւսի բարօրութեան:  
 Այդ պատճառով, Արքրէջանի, Հայաստանի, Վրաստանի փոխյա-  
 րաբերութեանց հարցը որ առաջնակարգ նշանակութիւն ունէր  
 երէկ, մնում է հրատապ, և այսօր:

Բաղեկիները պիտում են, թէ Կովկասում ազգային հարց  
 գոյութիւն չունի, բոլոր վիճիկ խնդիրները լուծւած են՝ ժող-  
 վուրդների ազատ կամարտայայտութեամբ, և ամենուրեք  
 իշխում է եղբայրական սէր ու համերաշխութիւն: Մի տեսակ  
 ՚ի յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»: Եւ իրօք,  
 առաջին հայեցողից այդպէս էլ թւում է. բուռն վէճեր սե-  
 բաղխուեանք չեն նկատուում և տիրում է լուծութիւն: Բայց ուշա-  
 դիր դիտողը շատ հեշտութեամբ մը տեսնէ, որ այդ նոյն չա-  
 րագուշակ ս գերեզմանային լուծութիւնն էր, որ տիրում էր  
 ցարսիսն իշխանութեան օրով: Այն ժամանակ էլ ծանդարմա-  
 կան մարտիկ հովանու ներքև ՚եղբայրական սէրն ու համա-  
 բաղխութիւնն, էր թագաւորում կովկասեան ժողովուրդների  
 միջև. բայց այդ չէր խաղաղում, որ Հէնց որ փոքր ինչ ազա-  
 տութիւն արուէր, նոյն այդ ժողովուրդները սկսէին միմիանց  
 վրա յարձակել խօսքով, զրքով ու դաշտնով:

Մտաւարտապէս նոյն ժանդարմական ձևերով է ՚լուծ-  
 ւած,՝ ազգային հարցը այսօր Կովկասում և, բնականաբար  
 տիրող ՚խաղաղութիւնն ու հաճութիւնն, էլ միւսնոյն բնոյթն  
 ունին: Ազգային հակամարտութիւնները չեն վերացւած, խեղդուած  
 են: Ամենագոր Ձէկան ընդհանուր լուծութեան է դատապարտեք  
 ամենքին, բայց Հէնց որ այդ Ձէկային ազգեցութիւնը թուա-

նայ, ազգային կրթիւրը դարձնող երևում կը գան տարերային թափով և, ինչպէս պատահեց ցարկովի խորտակման վարկեա- նին, նորից կարող են մեջտեղ երկն թշնամանքն ու զենքը: Ուր շուտ փոխադարձ հասկացողութիւն մարդկանց մէջ, իտպը միշտ անցնում է զենքին... Այդպէս կարող է ոլտոտհել, որովհետեւ անցեալ անհամաձայնութեանց ու բարոյութիւնների բոլոր հիմնական պատճառները մնացել են սեփական և այժմ՝ Խորհրդային իշխանութիւնը նկատելով սոսի կրթու ժա- մանակաւոր դրութիւն, որը, հակառակ իր մեծադրող խոս- տումների ու բազմազան փորձերի, իրական խաղաղութիւն չստեց Կովկասեան ժողովուրդներին, այս վերջինները պէտք է աշխատեն ստեղծել այնպիսի մի դրութիւն, որ վաղը, երբ այլեւս ոչ ժամանակ լինի և ոչ Ձեկա, Հնարարը լինի հաս- տատել իսկական խաղաղութիւն ու համերաշխութիւն: Այս նպատակով նրանք պէտք է նորից ու նորից անդադրուան անհամաձայնութեան և կռիւների աղբիւր ծառայող երեւոյթ- ներին և ջանան գտնել վիճող կողմերի համար ընդունելի և ընդհանուրի ներգրանակ դարգացումն ապահովող ձեւեր: Այս մտահարութեամբ, ահա մենք կը փորձենք քննութեան առնել այն խնդիրները, որոնք ցարկ անլոյծ են մնացել Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի միջև: Կրկնում ենք մեր մեկնա- կէտը այն ըմբռնումն է, որ Խորհրդային ՌԵՎՍԻՆ Ժամանա- կաւոր դրութիւն է, անխուսափելիորէն պիտի խորտակուի և նրա անբակների վրա մեքենական կերպով նորից կեանք պիտի ստանան Անդրիովկասեան անկախ Հանրապետութիւն- ները:



Հայաստան եւ Վրաստան. — Առաջ ամենահեշտ կարգա- գրելը խնդիրը համարում էր հայ - վրացական յարաբերու- թիւնը: Ճիշտ է, ցարական իշխանութեան շրջանում՝ յաճախ էին տեղի ունենում կրքոտ վեճեր հայ և վրասի ղեկավար տարրերի միջև, բայց ժողովրդական լայն զանգանները ապրում էին հաշտ ու համերաշխ: «Վերին խաւեր» վեճերի գլխաւոր նիւթերն էլ, մեծ մասամբ, և սղակական բռնք ունէին և պտտում էին Թիֆլիս քաղաքն է վրաց աղետականութեան շահերի շուրջը: Թեւեւփոքրեան օրերին այդ յարաբերութիւն- ները բաւական մտայնեցին, երբ վրաց մեշտեղիները թեւ տալով թաթար կալուածատէրերին՝ փորձեցին իրենց վեհապե- տութիւն՝ Հաստատել Կովկասում, սակայն նոյն այդ մեշ- շեղի կուսակցութիւնը ընդառաջ զենց հայկական պահանջին՝ հայկական ազգային շրջանակի կազմութեան խնդրում և ստանց տարարութեան ընդունել մշակումով սամառափոքը, որի համաձայն Հայաստանի մէջ էին մտնում Լոռին և Ախուրյալքի գոտաւը:

Վերաբերումը արամտապէս փոխեց Վրաստանի անխախտ- թեան հնչակուովց լեռոյ, երբ մեշտեղի յայտնի պարագլուխ Հերակի Մերեթէլին յանուն վրաց ազգի յարաբարեց, որ « ազգամագոսական ու տնտեսական նկատումներով » Ախուրյա- լքը, Լոռին և Վախախի գաւառի մի մասը պէտք է միացնել Վրաստանին: Այս յայտարարութեան հետեւց լեւալ շրջանների բռնի գրաւումը գիտութեան ուժով, իսկ այդ քայլն էլ, իր հերթին, առաջ բերեց հայ-վրացական արևմտա պատերազմը: Թիֆլիսում տարուած այս քաղաքականութեան հետ կատարեալ ներդաշնակութեամբ զարգացաւ և վրաց դիւանապետական

աշխատանքը արտասահմանում,\*) ուր վրաց պատուիակութիւնը վեհատղովին ներկայացրած յուշագրով վրացական սահման- ները հասցնում էր մինչև Ռիդէ, Բոլովլալ ու Չաթինդող, Վրաստանի մէջ առնելով ամբողջ Լախիստաւը, Թորթումն ու Օլթին, Արտահանը, Ախալքալաքը, ամբողջ Լոռին ու Առախիկ շրջանի մի մասը: Այս ծրագրով փակում էր Հայաստանի առջեւ ծովային ելք ունենալու Հնարաւորութիւնը, Հայաստանը առևւում էր վրաց ազգացուծեան շրջանակի մէջ և կախման մէջ էր դրւում վրաց քաղաքականութիւնից: Կատնայի է, որ նման մի դրութեան չէին կարող հանդուրժել հայերը, որոնք, իրենց հերթին, պիտի աշխատէին ապահովել Հայաստանի գոյութեան և զարգացման հիմքերը: Այս տարբեր ըմբռնում- ներից ու ներհակ ձգտումներից մտնելու առնե այն բոլոր զեւլքերը, որոնք մուսլչեցին հայ-վրացական յարաբերութիւն- ների հորիզոնը և պատճառ դարձան երկու կողմի համար այնքան արեւատոր գործի:

Փոխան է այժմ՝ վերաբերումը: Դժբախտաբար, նշաններ չկան ցոյց տալը, որ վրաց գործիչները մտայնութեան մէջ տեղի է ունեցել փոփոխութիւն: Հակաբոլշեւիկ վրացիները շարունակում են պնդել իրենց նախկին ռազմայնների վրա, իսկ կոմունիստ վրացիները՝ խօսքով պաշտարելով առաջինների զեւմ՝ փաստօրէն իրականացնում են նրանց ծրագիրը: Այսպէս, օրի- նակի համար, հայեր հարիւր հազար ազգաբնակիչներ ունե- ցող Արխաղան և դրա կենդց շանցնող Աջարիան ինքեալաբ են. ինքեալաբ է և մի բուււր ժողովուրդ ունեցող Օտէտիան 1917ի՝ «Կովկասեան Տարիգրքի», համաձայն 94,789 հաչ բնակիչ ունեցող Ախալքալաքը շարունակում է մնալ Վրաստանի ծայրագոււււ, և վրաց կոմունիստները խուչ են ձեւանում զեւլք Ախալքալաքցիների ազգայնները, Հակառակ հայ կոմունիստ- ների, վրաց կոմունիստների բնորոշ յատկութիւնը այն է, որ նրանք ռժմիւրէն համալաւււ են ազգային և՛ ազգայնական — դաւաճարեանքով և Վրաստանի ճակատադիրը շօշափող հիմ- նական հարցերում չեն տարբերուււ Վրաց միւս հոսանք- ներից:

Հայ-վրացական վեճը այսօր էլ գտնւում է նոյն տեղը, ուր դրւած էր երէկ մեշտեղիկ քաղաքականութեան շնորհիւ: Եւ այդ վեճի մէջ առաջին տեղը շարունակում է գրււել հղուային հարցը, որ, իբրցահայկական հեռանկարները մթաւ- թեան պատճառով, անհամեմատ աւելի սուր բնոյթ է ստացել: Մերեթէլիի բերանով Վրաստանի «տնտեսական ու ռազմա- գիտական», շուհերը շատցալով և Վրաստանի սահմանները մինչև Ռիդէ ու Չաթինդող հասցնող քաղաքական միտքը պարտաւոր է գիտակցել, որ Հէնց Վրաստանի անխախտութեան իրականացման համար անհրաժեշտ է, որ Հայաստանը ունենայ պիտական գոյութեան զարգացման տարրական պայմաններ, որոնք անհնար են, եթէ նա չունենայ արտաքին աշխարհի հետ կապելու ճանապարհ և իր ազգային հաւաքակտեւթիւնն ապահովող հողեր: Սահմանային հարցը հայերի համար շատ աւելի բարձր է քան «տնտեսական ու ռազմագիտական», նկատումները, որոնցով սողորւած են վրացիները. սահմանային հարցը մեզ համար նշանակում է հայկական զանգանները

\*) Տես Աւարովի « Անկախ Վրաստան » (Ռուսերէն) հետա- քրքրական գիրքը, որ յոյս տեսաւ անցել տարւայ վերջին Փարիզում:

Հայաստանի պետական սահմաններում տեղաորհուր կարելի-  
ու թիւն, եթէ վրաց ժողովուրդը ազգային տեսակէտից գրեթէ  
ամբողջովին ամփոփւած է նախկին Քուրթուխի ու Քիֆլիսի  
նահանգներում, այսինքն՝ Վրաստանի սահմանների մէջ, հայ  
ժողովրդի հայելի մի երրորդն է միայն ներկայ Հայաստանում.  
զրկել նրան Արաքսաբերդ, ուր մօտ 95,000 Հայի կողքին  
հասել 10,000 Վրացի է հարւում, կարելի նրանից հայկական  
Հոռին, փակել նրա առջև ճանապարհը դէպի ծով, նշանակում է  
խել նրանից գոյութեան և ապահովութեան գլխաւոր գործօնները  
Քէ իրենց ազգային կազմով, թէ աշխարհագրական դիրքով և թէ  
ներքին ձգտումներով այդ շրջանները կապած են Հայաստանի  
հետ, Հանդիսանում են բնական շարունակութիւնը հայկական  
լուծանքների, և վրաց «տնտեսական ու ազդանգրտական»,  
նկատումները, որ անհիմն եղին առաջ, այսօր, քաղաքական  
նոր հանգամանքներում, արդէն բոլորովին անհասկանալի են  
և ծառայում են միայն թուեաւորած միտորթոր է՛լ աւելի  
թուեաւորելու Այս դրութեան պէտք է վերջ տրի՛

Լուծել Հայ-վրացական հողային վիճը՝ նշանակում է  
վերացնել Հայ-վրացական մերձեցման գլխաւոր արգելքը՝ Սահ-  
մանային հարցի կարգադրութիւնը մեծապէս կը շեշտացնէ և մի-  
ւսն ինչդիրքերի լուծումը է, ու եակակն է, բոլշևիկների  
ձեռքից կը խլէ պրովոկացիայի ամենածովց դէմքերից մէկը,  
որից նրանք վարպետութեամբ օգտուում են իրենց տիրապե-  
տութիւնը ամբողջելու համար՝ Վիճելի հարցերի բաց մնալը  
ժողովրդական խռակի մէջ առաջ է բերում այն տպաւորու-  
թիւնը, թէ այսքան փորձեր ու փորձութիւնները ոչինչ չեն  
սովորեցրել կովկասեան գործիչներին, վախ է պատճառում,  
որ ապագայում էլ կրկնուի են երկվակյ ղեկները: Մինչդեռ  
փոխադրած հասկացողութիւնը ու ներհակութիւնները վերա-  
ցումը ահագին բարեբար ազդեցութիւն կ'ունենար լայն զանգ-  
ւածների հոգեբանութեան վրա:

Այստեղ մենք քննութեան չենք առնում տնտեսական,  
քաղաքական և այլ հարցերը, որոնք նայակա մնում են  
անյոյժ ու վերջնականապէս չկարգադրուած հայերի և վրացի-  
ների միջև: Այդ հարցերը, ինչպէս ասացինք, կարող են  
անելի շեշտութեամբ փակուել, եթէ միւսուի առաջին և հիմ-  
նական խնդիրը — հողավէճը՝ Սրա վրա պէտք է կեդրոնանայ  
պատասխանատու շրջանների ուշադրութիւնը՝ Եւ ինչպէս  
առաջ, Հայաստանում, ամէն անգամ, երբ խօսք էր բացւում  
հայ-վրացական յարաբերութիւնների մասին, նախաձեռնու-  
թեան առաջին քայլը սպասւում էր վրաց քաղաքական  
շրջաններից, այսօր եւս առաջին խօսքը նրանց է պատկանում,  
որովհետեւ պահանջները նրանց կողմից են դրւում և նրանք  
են, որ շարունակուում են մնալ անզիջող:

**Հայաստան եւ Ադրբեյջան.** — Մի կողմ՝ դնելով երկրոր-  
դական խնդիրները, Հայ — Ադրբեյջանեան փոխյարաբերութեանց  
մէջ կար և մ'նում է երկու ծանրակշիւ կէտ, որից բղիւլ են  
բարդ դէպքերը: Առաջինը այն վերաբերումն է, որ Ադրբեյջանը  
ունենց է և ունի դէպի Քիւրքեան. երկրորդը՝ դարձեալ  
հողային վէճն է:

Ռուսական յեղափոխութեան առաջին օրերից հենց, Ադր-  
բեյջանի պատասխանատու շրջանները բռնեցին թիւրքերի  
կողմը և ինչպէ կարող էին օգնեցին նրան Ռուսաստանի դէմ  
մղած պատերազմում, թրքական ներշնչումով և արբեյջան-

ցիների ճիգերով կազմակերպեցին քրդական և թաթարական  
բնբոստութիւններ Երևանի, Շարուր — Նախիջևանի ու Սուր-  
մալուի շրջաններում, ուստական ռազմաճակատի ամենատա-  
նապալի օրերին: Նոյն ճիգերի հետեւանքներից մէկը եղաւ և  
Կովկասեան մութեան քայքայումը և թիւրքերի ներխուժումը  
Անդրկովկասի ներսեր: Ադրբեյջանից, առանց վարպտելու  
իրենց քաղաքական յայտեր կապեցին թիւրքերի հետ, որոնց  
հետ գործեցին ձեռք — ձեռքի: Հայ ժողովրդի ամենաորդեր-  
գական օրերին արբեյջանցիները թիւրքերի հետ էին ընդդէմ  
Հայերի: Թիւրքերի օգնութեամբ ուղում էին կարգադրել և իրենց  
հողային ծրագիրները, որոնց իրադրումով փաստօրէն մէշտեղից  
վերացւում էր Հայաստանը: Այսպէս, Բաթումի խորհրդածո-  
ղովում Թան Խոյսիին և Շուսաֆէթզոլը նոյն իսկ Տրե-  
ւանն էին պահանջում, վեհաձեռօրէն Հայերին թողնելով էջմիա-  
ծինը, իբրեւ մայրաքաղաք: Իսկ Թուֆլիսեացի Խաղաղութեան  
վեհաժողովին ներկայացրած ծրագրով Հայերին թողնում էր  
շուրջ 10,200 քառ. կիլոմետր տարածութիւն, մ'նացեալ  
հողերը պահանջւում էին Ադրբեյջանի համար: Գանձակ, Ղարա-  
բաղ, Զահեղուր, Նախիջևան, Շարուր, Երևանի գաւառի  
մի մասը, Սուրմալու, Կարո, Օլթի, Արտասան՝ արբեյջանցի  
ազգայնականների կարծիքով պէտք է կապէին մասը Ադր-  
բեյջանի, որը բարեկամական զաշնադրով պիտի միանար  
Թիւրքիային:

Ռշինչ չկայ զարմանալի, որ արբեյջանեան քաղաքա-  
կան այս ծրագիրները և նրանց ղեկավարների գործելակերպը  
պիտի բանային խոր անդունդ երկու դրկից ժողովուրդների միջև.  
և առիթ պիտի ծառայէին անվերջ դաւերի ու արևոտո  
բաղնումներին: Ադրբեյջանեան ղեկավարների այդ ախորժու-  
կները պատճառ կարճա՛ն անշուշտ և այն բանի, որ բոլշե-  
ւիկներն այնպէս հեշտութեամբ մտան Բագու և քար քարի  
վրայ չթողին անկախութիւնից:

Հինգ տարի է ահա բոլշևիկներն իշխում են Ադրբեյջա-  
նում. արբեյջանցի գործիչների մտայնութեան մէջ հիմնա-  
կան փոփոխութիւն տեղի անեցցի է: Ո՛չ, գորախտաբար.  
փոփոխութեան նշաններ չեն Նմարւում: Եւ այստեղ էլ պէտք  
է նկատել, որ այս տեսակից պիժ մտարբերութիւն չկայ  
հակաբոլշևիկ և բոլշևիկ արբեյջանցիների մէջնէ. Նարմա-  
նովի և Հուսէյնովի ազգային քաղաքականութիւնը միայն  
ձեւով է տարբերում Շուսաֆէթզոլի և Թան Խոյսուկ հետո  
պընդած նպատակներից. էութիւնը նոյնն է: Այսպէս Կոմունիստ  
Ադրբեյջանցիների համար էլ Նախիջևանը կամուրջ է ծառայում  
Բագուի և Անդրաբալի միջև, ինչպէս և մուսաւաթական  
արբեյջանցիներին: Կոմունիստներն էլ զուտ հայկական Ղարաբաղ  
հարարում են Ադրբեյջանի մաս, ինչպէս և մուսաւաթականները  
Կոմունիստներն էլ քոչի հարցում տուտացի կերպով ղեկավար-  
ւում են նոյն սկզբունքներով, որով ղեկավարւում էին իրենց  
խախորդները: Կոմունիստական Ադրբեյջանն էլ թրքական պրո-  
պագանդի ու դաւերի օջախ է, ինչպէս էր մուսաւաթական  
Ադրբեյջանը: Եւ սուշպիլը ընթերցողը կը նկատէ, որ թէեւ  
շատ զուտ ձեւերով, Երևանի բոլշևիկեան թիւրքերն էլ  
նոյն մտքերն են յայտնում խորհրդային Ադրբեյջանի ընթացքի  
դէմ, ինչ որ յայտնում էին ու ջարտնետուում են յայտնեք  
զաշնակցական թիւրքերը, այն տարբերութեամբ միայն, որ  
զաշնակցականները յամար կերպով պայտպանում են հայ ժողո-

վրի որպայն շահերը, միջոցա կոմունիստները սեղի են առնել բոլոր ձևակառուցումներում:

Պարզ է, որ այս փոխարարերութիւնը Արբէշանի և Հայաստանի միջև չի կարող համարուիլ բնականօրէն Այդ վիճակի դարմանումը անհրաժեշտ պահանջ է երկու կողմերի համար էլ: Ի՞նչ սկզբունքներ պէտք է գրուին, իրրեւ հիմք երանց յարաբերութիւններին:

Անեկից առաջ, իհարկէ, պէտք է որոշուի քաղաքական օրէնկոսացիայի խնդիրը: Ո՛չ մի սպառնիչ հոսանք հայ իրականութեան մէջ չի կարող հաշտ ազդել նայել մի քաղաքականութեան, որի նպատակն է Քիւրքեան խառնել կովկասեան ժողովուրդների ներքին գործերի մէջ, այն Քիւրքեան, որը յաճախ կերպով հետապնդում է հայերի բնաջնջման ծրագիրը: Եւս առաւել տեղեղունելի է մի գրութիւն, ըստ որի Արբէշանի ազգային բազմաճեղքների իրագործողը և սահմանային խնդիրների կարգադրողը պէտք է լինի Քիւրքեան: Այս կէտում թիւրիմացութիւն չպէտք է թաշ: Լեռնաարար, եթէ Արբէշանի զինավորները շահագրգռուած են Հայերի հետ ընդհանուր լեզու գտնելու խնդրում, պէտք է վերջնականապէս հրատարակուեն այդ մտաւթիւնից և ամառ կերպով կանգնին իրական անկախութեան տեսակէտին վրա — անկախութիւն ո՛չ միայն հիւսիսից, այլ և հարաւից: Թախլու ու Նուրի փառանքների Արբէշանը չի կարող ճառայել խաղաղութեան ու հաշտութեան գործին Գովկասում: Ըստ Լեռնային անկախ և արտաքին ազգեցութիւններից այստեղ Արբէշանի հետ համերաշխութեան լեզու գտնելը դժուար չի լինի իր հարեւանների համար: Միայն ամբողջական անկախութեան գաղափարը իրացնելով Արբէշանին գործիչները ընդունակ կը լինեն հասկանալու, թէ ո՞ր է տեսնում իրենց օրինգում քաղաքականութիւնը Հայաստանի սահմանների նկատմամբ:

Անտարակոչա, հազիւ թէ աղբրէշանցիների մէջ էլ այժմ ըստ լինին այնպիսիները, որոնք դեռ հաւատում են ԾուռուՓրէկով — Խան Խոյսիկների ծրագրերին լրջութեանը: Կեանքի փորձերը նրանց համար էլ ի դուր չանցան: Բայց, անշուշտ, տակալին քիչ չեն ծարղիկ, որոնք հայ — աղբրէշանեան սահմանակէնը քննելիս բնաւ հաշի չեն առնում Հայաստանի կենսական շահերը: Կոկասակ ղեպտում՝ ի՞նչու Նոխիշեանը պիտի շարունակէր թաշ Բագուի գերիշխանութեան տակ: Ինչու լեռնային Ղարաբաղն ու լեռնային Փանձակը — հայկական լեռնաշխարհի անմիջական շարունակութիւնը կազմող այդ շրջանները — պիտի համարէին վիճելի՞ չնչայած, որ աշխարհագրութիւնը, ազգային կազմը, քաղաքական նկատուձեւերը, ամէնքը խօսում են ինկատու Հայաստանի:

Ինչպէս հայ — վրացական սահմանային խնդիրները, հայ — աղբրէշանական սահմանակէնն էլ թելադրում է անչափազ լուծում: Անշուշտագրի անհրաժեշտութիւն է որ պատասխանատու շրջանները գտնեն երկու կողմերի համար էլ արդար և ընդունելի սահմանագիծ, որով մտանգամ ընդմիջում քուտէր այս շարաբարտիկ հարցը: Եւ այստեղ էլ առաջին խօսքը պատկանում է մեր հարեւաններին, որովհետեւ նրանք են եղել միշտ նախալարանակի ու պահանջողի դերում, նրանք են յետ մղել վիճելի հարցերը խաղաղութեամբ և փոխազգայն զինամեղրով լուծելու բոլոր փորձերով:

Հայ — աղբրէշանեան հոգովէնի կարգադրութիւնը կը բռնայ նոր դարադուր կովկասեան ժողովուրդների պատմութեան մէջ, նա խոշոր շարժող կը դիւրացնէ և անհամաձայնութիւնների առարկայ միւս խնդիրների կարգադրութիւնը:

Այս խնդիրների մէջ առաջին տեղը բռնում է քուչի հարցը, որ այսօր էլ շարունակում է յուզել հանրային մտքը: Հայաստանը, որ տառապում է ծայրայեղ սակաւահողութիւնից, որի երկարագործութիւնն ու խաշնարածութիւնը չեն կարողաւում զարգանալ, ստիպուած է ահագին քանակութեամբ հող — 379,720 դեհարտին — տրամադրել աղբրէշանցի անասնապահներին, գրեթէ առանց փոխհատուցման: Աղբրէշանցի դիւրացիին դաշտանի շրջաններում դառնում է հողի մշակութեամբ և միեւնոյն ժամանակ հայկական լեռները իր ձեռքն է պահում իր հօտերի համար, այն ինչ հայ դիւրացիին իր տանը հող չէ ձարում և Աղբրէշանի առատահող շրջաններից էլ օգտուելու իրաւունք չունի: Այս դրութեան, ի հարկէ, չի կարելի հանդուրժել: Քուչի հարցը, որ Գովկասեան կեանքի ամենացաւառ կողմերից մէկն է, պէտք է որոշուի ո՛չ թէ միակողմանի կերպով, ինկատու Աղբրէշանի, այլ յօգուտ երկու կողմերին էլ: Քուչի հարցի լուծման երկու ձեւ կայ: Կամ հետոջնունէ վերջ պիտի տրուի քուչարութեան և հայկական սարերը պէտք է թողնեն միայն Հայաստանի ժողովուրդին, կամ աղբրէշանցի քուչարներին արամադրուած հողերի փոխարէն Աղբրէշանի կողմից պէտք է արևի փոխհատուցում:

Քոչըր տեղ չի բռնում հայ — աղբրէշանեան փոխարարութիւնների մէջ և Բագուի նախը, որը մուսուլմանական կառավարութեան օրով դարձել էր քաղաքական ձեռնման միջոց: Ակնյանտի է, որ նախ ի հարցը միակողմանի կերպով վճռելի խնդիրներից էլ, նախ ից օգտուելու հետաւորութիւնը լրակատար կերպով պէտք է ազգային և հարեւան երկիրների համար: Ինչպէս Բաթումի ձակապարտ վիճակաճարէն շահագրգռուած են Հայաստանն ու Աղբրէշանը, նոյնպէս և Բագուի նախը՝ Վրաստանն ու Հայաստանը:

Այս և ուրիշ խնդիրների լուծումը զգալի կերպով կը հեշտանայ, եթէ կարգադրուի դիտարար հարց — հողակէճը: Իսկ սրա լուծումն էլ նախնաւաջ կարւած է աղբրէշանեան ժողովրդի քաղաքական գիտակցութիւնից ու վերջից:

Ինչպէս տեսնում ենք, Հայաստանի և հարեւան ժողովուրդների փոխարարութեան հարցը շարունակում է մնալ կենտոն ու մշտայաղ վիճակի մէջ, և լուծման հնարակարները այնքան էլ պայմաւ չեն: Լին մտայնութիւնը չի վերցուած բոլորովին: Այդ մտայնութիւնը շարունակում է ապրել և բոլորիդմի կեդրի տակ: Սրանից ոմանք հանում են այն եզրակացութիւնը, թէ այսօր ժամանակը չէ այդ հարցերը արծարծելու, նրանց հաշուելարգարը պէտք է թողնիլ ապա: Չային, երբ իրենց վիճակետական իրաւունքներին տիրացած ժողովուրդները ի վիճակի կը լինին նման խնդիրներով դառնելու: Այժմ մէկ գործ միջ միայն անելիք — միտաւ և միահամուռ ուժերով կռուել Հասարակաց թշնամու դէմ:

Նման համագում մտացանկի՞ նշանակում է ըմբռնել հարցի էութիւնը: Լէնց որպէսզի Գովկասեան ժողովուրդների ապաւտութեան ժամը Ժամանակ, անհրաժեշտ է օր առաջ լուծել այդ խնդիրները: Լէնց ազատութեան առաջին օրն իսկ նոր սխալներ չզարծելու համար, պէտք է այսօր լուծուին այդ հարցերը: Նրանք պէտք է լուծուին և երա համար, որ վերջ գտնէ Գովկասում տիրող թշնամեան մթնոլորտը, և ժողովուրդները կարողանան բաց սրտով ու փաստութեամբ մտեւնալ միմիայն և առանց վարսուտի ու միանալ ու միահամուռ ուժերով կռուիլ Հասարակաց թշնամու դէմ:»

Ս. ՎՐԱՑԵԱՆ

# ՇԱՐՈՒՐ ՆԱԽԻՉՅԵԱՆ

## ԵՒ ԹՈՒՐԲ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Շարուր Նախիջևանի Հին պատմութիւնը կը ներկայացնէ ամբողջ շարք մը ազգամիջեան կռիւներու և պայքարներու: Այդ գաւառները իրրեւ Հայկական միջնաշխարհի առաջապահը միշտ առաջին տալիս իրենց կրօնի ընդունած են մեր երկիրն արշաւող թշնամիներու Հարուածները:

Մեր երէթէն դուրս է կանգ առնել անցեալին վրայ: Բայց չենք կրնար լուծթեամբ անցնիլ վերջին երեսնամեակի վրայէն, որովհետեւ՝ այսօրայ վիճակը շարունակութիւնն է մտակ անցեալին և վաղան պայքարը ըստ էութեան տարբեր չպիտի ըլլայ երէկան պայքարէն: Վ

Այս վերջին երեսնամեակին Շարուր Նախիջևանի մէջ ծագած կռիւներու հիմնական պատճառն այն է, որ Թուրքերն ու Քաթարները ամեն ձեւով կը ճգնին այդ գաւառները խորիստ դարձնել Համլուրանկան և Համաթուրանկան զաղափարներու, որոնք եթէ յաջողութեամբ պսակէին, մահացու հարած պիտի տային ոչ միայն Շարուր-Նախիջևանի հայութեան, այլև ամբողջ հայ ժողովուրդի կեանքին:

Վ Այս գաւառները թուրք-թաթար գործիչներու մասնաւոր աւշարութեան առարկան էին դարձած այն պատճառով, որ անխուստփելի օդակը կը հանդիսանային մեկ կողմէ ուսուսական և պարսկական Աուրպէշաններու, իսկ միւս կողմէ Տաճկաստանի և Ռուսաստանի թաթարական զանգուածներու միջև: Եւ որովհետեւ այս օդակին շուրջը դարձող Համլուրանկան և Համաթուրանկան քաղաքակրթութեան Համար հայ տարրը բնական խոչընդոտ կը նկատուի, անոր ոչընչացումը նոյն գաւառներուն մէջ՝ կը Համարուի կենսական անհրաժեշտութիւն: Վ

Ինչ 1900 թուականներէն Համաթուրանկանութիւնը ունէ կը ղեկ Պաքու: Այսօրայ Քէմալական Տաճկաստանի ներկայացուցիչներէն մէկը, որ Համաթուրանկանութեան և Թուրք օճախի հիմնադիրներէն է, — իթիլիստական և քէմալական Թուրքիոյ մտքի վարիչ Աղայէվը, ժամանակ մը կեդրոնական դէմք էր Պաքուի մէջ: Աղայէվ թաթար ժողովուրդները կը դառնորակութիւնը թուրանական զաղափարներով: «Կասպի» թերթի խմբակիրը իր խտէպներու իրագործման միջոց կը նկատէր Հայ ժողովուրդին թուրացումը: Անոր և իր հետեւորդներու այս ձգտումը կը զուգահեռուի 1900ին սկսած Գալիցիանէն քաղաքակրթութեան, որ Անդրկովկասի մէջ կը հետապնդէ նոյն նպատակը Համլուրանկաններու և Համաթուրանկաններու Համար: Վայրկեանը յարմար էր առաջին Հարածը իջեցնել Հայ ժողովուրդին գլխին: Այս և պատճառը որ 1905ին Հայ-թաթարական կռիւները սաստկութեամբ արտայտուեցան Շարուր Նախիջևան գաւառներուն մէջ:

Յանկարծակիի եկած իրավութիւնը այդ գաւառներուն մէջ Նախ մեծապէս ձուսուեցաւ, բայց շուրջացաւ փոխվրէժի շրջանը և ինքնապաշտպանութեան դառնկցութիւնը, որը պիտի հրահրէր և կազմակերպէր Դառնկցութիւնը: Այդ ժամանակաշրջանին աւելի քան արէտաւոր կացութիւն էր ստեղծուած Իսլամներու և Քաթարներու Համար և կեանքի

ու մահուան կռիւը աւելի կը ծաղկէր հայութեան, քան Քաթարներուն: Ձմեռադարի շրջան մը հաստատուեցաւ միջեւ Համաշխարհային պատերազմը Երբեմն մասնակի բռնկումներ կը ծագէին այդ շրջանէն, բայց ընդհանրապէս զգոյշ և զինուած խաղաղութիւն կը տիրէր երկու սիջերուն միջև: Երբ Համաշխարհային պատերազմը պայթեցաւ, կարծես վճռական վարկեանը հասած էր այդ երկու գաւառներուն Համար:

1913ին Թուրք զորակալներ կը կազմակերպին թաթար ժողովուրդը, յանուն որբազան պատերազմի, յանուն իսլամութեան և թուրանական զաղափարներու: Հայերը զգոյշ, բայց վստահ են Ռուս բանակի ուժին և յաղթութեան վրայ: Վրայ կը հասնի առաւելան յիզափոխութիւնը, որ ճակատագրական նշանակութիւն պիտի ունենար Շարուր Նախիջևանի Հայութեան Համար: Այդ գաւառներուն մէջ կարծես զեանի տակէն կը բուսնէին թուրք սպանները և չափուները, որոնք տեղացի ժողովուրդէն բանակներ կը կազմեն և առաջին տալիս այդ գաւառներու հայ բնակչութիւնը փճացնելու կը ձեռնարկեն: Գիւղեր, քաղաքներ կ'անբերին և հազարաւոր Հայեր կը կոտորուին, ո՞վ որ դիմադրութեան ոգի է պահած կը քողովի Գողթանի, Տարաղաղաղի և Նախիջևանի Արաքսի լեռները և օրհասական պայքար կը մղէ: Ատն մը կարծես Հայութեան աստղը կը մտի այդ գաւառներուն մէջ և մահչիւր կը թագաւորէ, բայց յանկարծակի 1918ին լուներէն կը խուժեն զինուած հայրենակիցներ և զերթէ ամբողջ Նախիջևանի գաւառը միջեւ Ջանգզուր և Ջուլֆա կը մարբէն թաթար ժողովուրդէն:

Այդ փոթորիկէն յետոյ ոչնչացած էր թաթար ժողովուրդին զերակրթութիւնը Հայերու հանդէպ, և հայ և թաթար բնակիչներու բնկորները մոխիրներու և անբանկերու մէջ մնացեր էին, երբ վրայ կը հասնի Խովի փաշայի տաճկական բանակը և դուրս կը քշէ զիւսուր կէտերուն տիրակալի Հայերը և կը հաստատեն տաճիկ իշխանութիւնը այդ գաւառներուն մէջ: Հայերու համար կարծես ամեն ինչ կորած էր, տաճիկ զօրքը իր սուրներով բռնած էր Շարուր ու Նախիջևան մինչև Ջանգզուրի լեռները, Հայեր տեղահան եղած էին և նորաստեղծ հայկական կառավարութիւնը Պաթումի մէջ վաւերացուցած էր Նախիջևան - Շարուրի կորուստը յօրուս Թուրքիոյ: Բայց այդ յուսահատ վիճակը երկար չտեսցէ Հայերու Համար: Շուտով կը յաղթուէին Թուրքերը և չեղեալ կը համարէր Պաթումի դաշնադիրը և Թուրք զօրքը կը հեռանար Շարուր Նախիջևանէ: Հայկական նորաստեղծ բանակը առաջ կ'իջերթայ և հայկական իշխանութիւնը կը հաստատէ այդ գաւառներուն մէջ:

1919-ին կարծես Դառնկցութիւնը հասած էր իր նպատակին և տալիս Թուրք-թաթարական քաղաքակրթութիւնը ան Հայաստանին միացուցած էր Շարուր Նախիջևանը և ապահոված՝ այնտեղի Հայութեան գոյսութիւնը. բայց կանգնած իր մեծ դժուարութեանց առջև, հեռացող Թուրք բանակը իր ետեւը թողած էր Համաթուրանկանութեամբ թրճած թաթար ժողովուրդը, թողած էր իրր զեկամար Հարբուար սպաններ, չափուներ այդ ժողովուրդին և անսպառնաղովմութեք: Կազմ և պատրաստ նա կ'սպասէր Արաքսի-

միւս ափը, Մակուի խնուքեան մէջ, ուրիշ այժմ՝ կը թելարէր և Մակուի սարգարին և ուրիշ խաներու որ այդ գաւառները չձգին Հայերուն, այլ գոհէ միացնեն Պարսիկ խնուքեանց։

Հայաստանի Հետ միաժամանակ կազմակերպուած էր Գաւառիկի և Պաքուի մէջ Ատրպէյջանի հանրապետութիւնը։ Ան չի ձանկեր տախիջուանի կցումը Հայաստանի, և պարսկական հոյիքին և ուրիշ այլ ձանապարհով դրամ ու ղէնք, դիվանար և զօրք կը փոխարէն տախիջուան Եարուր և ապստամբութիւններ կը կազմակերպէ։ Այ մէկը տեղի կուտայ և մասը մոխտէ աւելի շարունակ կուի կը ծագի, երբեմն յաջող, երբեմն ձախող։ Ի վերջոյ Հայերը կը բշուին Եարուր-Նախիջուանէն, բայց 1920-ին հայկական զօրքեր առաջ կը շլաժին հիւրք ուղղութեամբ Գորիսէն, Դարուալագիտէն և Երեսուէն և նորէն կը գրաւեն ամբողջ Եարուր և Նախիջուանի 3/4ը։ Կուրսն մանկ Նախիջուան քաղաքը, երբ նոր անահկալի տաջիս կը գտնուին։ Ռուս խորհրդային զօրքը Միւնիքի վրայով կը մտնէ Նախիջուան քաղաքը և զայն անբռնան մտքը կը հրատարակէ «կարմրած» Ատրպէյջանին։ Գաշտուկական կուսակառութիւնը աւելի քան դժուարին կացութեան մէջ էր ինկած։ Այժմ՝ պիտի կուտէր այդ գաւառներուն Համար ոչ միայն թուրք զօրձակներու, Մակուի և Այլ խաներու, Համահարանական ուժերու, տեղացի թախիջուանի դէմ, այլ և խորհրդային մեծ Ռուսաստանի և խորհրդային Ատրպէյջանի դէմ։

Հակառակ ատոր, ես չուզիր զՆՅՂ այդ գաւառները և կուիւր նորէն ծայր կուտայ այդ գաւառներուն մէջ, այս անգամ Ռուսներու Հետ։ Հայկական զօրքը կը փակէ Միւնիքի ձանկան Երեսուէր, Տարսլագիտի կողմէն, կը բշէ ուսու զօրքը և կը պաշարէ Նախիջուան քաղաքին ու մտտակայ տեղերուն մէջ, միւնիս որ Հայաստանի կուսակառութիւնը կը պարտուի Կարսի, Աղբաւանդապոլի և Իրիջանի ստորոտը, թուրք և Ռուս զօրքերէն և ակամայ իշխանութիւնը կը ձգէ խորհրդային ուժերուն։ (1920 Ինկ. 2-ին)։

1920ի վերջը Հայաստանի մէջ կը մեկուսացուի Դաշնակցութիւնը։ Իշխանութեան գլուխ կ'անցնին պաշտօնիկները և կը վերջանան պաշտօնները Եարուր Նախիջուանի մէջ. կը տիրէ խաղաղութիւն և հանգստութիւն և շատութիւն Սուրի կնքուի Տաճկաստանի Հետ։ Տաճկաստանը յանձնին Մուսթաֆա Քեմալի և Ազգային Մեծ Ժողովի կ'որդարէ ՌԹԹ-Հատի քաղաքականութիւնը Արեւելքի մէջ, իր Ազգային Ուխտին Հիմնաքար կը գործնէ Անդրկովկասի մէջ եղած նուաճումները։ Տաճկաստանի անբռնան մտքը կը Համարէ ոչ միայն Պրէստ-Լիթովսքի, այլ և Պաթուի պայմանագրութիւններով որուած հոգաւորները։ Այդ Հիմքերով է որ զայն կը կնքէ Օսթիէտներու Հետ Մասկուայի մէջ, 1921-Մարտ 16-ին և երեք յաւաճով կը Հաչակէ։— «Մերու պայմանագրութիւնը կը հաստատեն որ Նախիջուանի գաւառը պիտի ըլլայ ինքնավար՝ Ատրպէյջանի թեւարկութեան աակ, սահմանները պիտի որոշուին այս պայմանագրութեան կցուած յաւելածով. և այդ թեւարկութիւնը չի կրնար փոխանցուի ուրիշ որ և է պետութեան Նախիջուանի եւանկիւնի հողամասը կը սահմանագծուի 1) Արաքսի 2) Դաղնոսի գիծը 3829. Վէլի ասող 4171. Բազարաբը 6587. Քեմալու ասող 6930. 3) Քիւմուսու

ասող գիծը, որ կ'անցնի Սաւայ Բուլաղ տաղէն 8090) Արաքսու կայարանը և Դարաբուրի ու Արաքսի խնուքեանը կ'որոշուի Ատրպէյջանի, թուրքերու և Հայաստանի ներկայացուցիչներէն կացուած յանձնարարութիւն մը կողմէ»։

1921. Հուլ. 21-ին Կարսի մէջ տեղի կ'ունենայ Թուրքիոյ, Հայաստանի, Ատրպէյջանի, Արաստանի և Ռուսիոյ միջեւ խորհրդածոյով, ուր Հինգ յօդուածով կ'որոշուի. «Մէկ կողմէ թուրք պետութիւնը և միւս կողմէ Ատրպէյջանի և Հայաստանի սովետական պետութիւնները կը Համաձայնուին որ Նախիջուանը իր սահմաններով, որ որոշուած է Գ. յաւելուածով, պիտի կազմէ առանձին ինքնավար շրջան մը, Ատրպէյջանի հովանաւորութեամբ»։

Երեւոյ պայմանագրութիւնները կը հաստատեն թէ թուրքիա մեծ շահութիւններուն ցոյց տալով Նախիջուանի շրջանի մասին, թէ և չի կրնար իր երկրին կցել զայն, ինչպէս Կարսը, Սուրմալուն. բայց կ'աշխատի ապահովել իր շահերը, ինչ չտուլով որ կցուի Հայաստանին, այլ զուանայ ինքնավար ինքնավար և ցեղով թուրք Համարուող Ատրպէյջանի հովանաւորութեամբ։ Ահա այս ձեւով խաղաղութիւն կը տիրէ այսօր և երեսութեան զիսն ոչ ազգամիջեան կուրիսը և ոչ վէճեր։



Այս Համաձայնագրութիւնը ընկելով, կ'ուղեիք Հաստատել, թէ ինչ մեծ շահագրգռութիւն ցոյց կուտայ Թուրքիա՝ Եարուր-Նախիջուանի շրջաններուն Համար, և թէ ինչ յամառութեամբ Դաշնակցութիւնը պաշարած է ապահովելու Հայ ժողովուրդին շահերը և իրաւունքները այդ գաւառներուն մէջ, Միաժամանակ այս Համաձայնագրութիւնէն կ'երևայ որ Մուսթաֆա կամ սովետական Արքիշանի քաղաքականութիւնը Հիմնականօրէն չի տարբերի այդ գաւառներու մասին, իսկ ուղղութիւնը յար և նման է Թուրքիոյ քաղաքականութեան։

Ու վերջապէս, Դաշնակցութեան կզղիացուածով խորհրդային Ռուսաստանը և խորհրդային Հայաստանը ընդառաջ կ'երթան Տաճկիկներու պահանջներուն և Հայաստանէն կը խլեն Նախիջուանը ու կուտան Արքիշանին, վերահաստատելով « խաղաղութիւն » — զերեզմանի խաղաղութիւն։ Վճանգատութիւն և ներկաշխուհութիւն է, երբ ուրիշին կուտան ջու ոչ միայն պատմական, այլև կենսական շահերը, ջու երկրի գոյութեան Հիմքը, թէ զուստանութիւն և ապահովութիւն Հանդէպ այն ժողովուրդին, որու անունով կ'իշխեն։ ✓

Այս խնդիրը Հասկնալու Համար, քննենք Եարուր-Նախիջուանի, այսօրայ Նախիքային նշանակութիւնը Հայաստանի և Թուրքիոյ Համար և առհասարակ միջազգային տեսակետով։ Եարուր-Նախիջուանը կը գտնուի Նախիկն Երեսուէանէն Արաքսի մէջ, Արաքսի միջին հովիտում, Հարաւէն սահմանէն է Արաքսը, որու միւս ափը կը գտնուի Պարսկաստանը։ Պարսից Աարպատական նահանգը անմիջական սահմանը կը կազմէ այսօրուայ Նախիքային. Ատրպատականի, Մակուի և Արաստայի խանութիւնները անմիջական շփման մէջ են Նախիքային Հետ։

Հարաւ արեւմուտքէն, Արաքսի հովիտով, Մասիսի Հիւսիսով, Արալընիսի Գիջոցով Տաճկաստանէն է, որ սահմանը կը կազմէ Նախիքային, իսկ արեւմուտքէն, Հիւսիսէն և արեւելքէն

Հայաստանը կը շրջապատէ զայն Երևան, Գարաբաղագոյն և Զանգեզուր գաւառներով: Այսպիսով Նախկրայը երբէ քառորդ մասով շրջապատուած է Հայաստանով, Հարաւէն Պարսկաստանով և փոքրիկ կտրոցով մըն ալ Տաճկաստանով, իսկ Արբէշանը չունի ոչ մէկ միջոց անմիջականօրէն կապուելու իր մակահին տակ գտնուող Նախկրայի Հետ: Այդ վիճակը անբնական է, քանի որ Նախկրայը պիտի կապուի Արբէշանի Հետ կամ Հայաստանի Հողերու վրայոյց և կամ Պարսկաստանի, և փաստօրէն անուանական պիտի դառնար այդ Հովանաւորութիւնը և անհարկի՝ օգտուիլ Նախկրայի անտեսական և Ֆիզիքական ուժերէն: Երբ այդ անյարմարմարութիւնները կը երկիւյթանան Արբէշանի Համար, ինչն միջոցներ չի փնտռէր ձեռք գտնելու Հայաստանի ուրիշ մէկ վայրին և կամ ուրիշ խնդրի մէջ, ու կը շարունակէ յամտօրէն աջակցիլ այդ անբնական իրաւունքը Նախկրային մէջ, թէն այսօր ոչ միայն շահ չունի, այլ և կը վնասուի:

Երկու պատճառներով. — Նախ որ Նախկրայի ինքնուրույն գոյութիւնը Հայրաստանի ծոցին մէջ՝ կ'ուժեղացնէ Քուրքիսը դիբըը Անկրկովկասի մէջ և միաժամանակ անոյժ և անկար կը զարձնէ Հայաստանը. երկրորդ Արբէշան ժամանակաւոր կը չամարէ Հայաստանի և Պարսկաստանի սահմանները և կը հաւատայ թէ շուտով իրեն պիտի կցէ Զանգեզուր գաւառը, որով անմիջականօրէն պիտի միանայ Նախկրայի. միւս կողմէ, կը հաւատայ թէ Պարսիք Արաբաստաններ իր թափար ցեղերով պիտի բաժնուի Պարսիք Հողերուն և իրեն պիտի միանայ կազմելու մէկ և ամբողջական Արբէշան, Տագստանէն մինչև Տաճկաստան, մինչև Արտաշէսի. Համաստանի մտայնը: ✓

Այն այս երկու՝ մէկը այսօրուայ, միւսը վաղուայ՝ քաղաքական ձգտումներն են, որ կը թելադրեն Արբէշանին ամբար պահել իր ձեռքին մէջ Նախկրայը և եթէ այսօր անհնար է անմիջականօրէն իրեն կցիլ այդ երկիրները, գերադասելի կը համարի ունենալ ինքեամբ շրջան մը Հայաստանի ծոցին մէջ, Հոգ չէ թէ այդ ինքեամբութենէն ինքը շահ չունենայ այսօր և միայն ծախքի դուռ բանա, Հոգ չէ թէ այդ վիճէն Ֆիզիքայական և անտեսապէս մաշուան գտառապարտուած ըլլայ երբայրակից կարմիր Հայաստանը:

Երկոց Երկրայաց ազգաբնակիչ և Հողային տեսակէտներէ խիստ մեծ արժէք կը ներկայացնէ Տաճկաստանի և Արբէշանի Համար, որ այնքան Հետեւողականօրէն կը ձգնին այդ գաւառները միացնել իրենց: Իրմինք վիճակագրական քարտէսին.

Ըստ 1912 թուի պատճենական վիճակագրութեան (Կովկասեան տարեգիրք, 1913, էջ 175)

Դաւառակ	Տարածութիւն Գառ. վեցոս	Լճերի. ազնեկ. թիւը	Հայ	Քարքար	Միւս ազգեր
I	660,62		12,642	12,369	
II	1233,82		13,860	15,263	
III	1327,35		8086	17,155	
IV	697,15		14,132	18,519	
Փայտեմեր			2857	10,769	
Նախկր. գաւ. Ծարուս I	3939,04 747,24	125,300 44,051	51,577 6,975	73,093 35,314	630 1762
Նախկրայը	4686,30	169,351	58,552	108,407	2592

Որպէսզի ուելի պարզ ըլլայ Նախիջևան-Շարուրի ազգաբնական վիճակագրութիւնը, բերնը 1915 և 1917ի ուսապոշածական վիճակագրութիւնը, նոյն Կովկասեան Տարեգրքէն. (1917) և l'Arménie Transcaucasienne. (1919).—

գուառ	նայ	քարքար	այլ ազգեր	գումար
		թուրմ.և.և.6.		
Նախիջևան	54.209	81.191	1453	136.853
Ծարուս	29.165	58.493	2589	90.247
	83.374	139.684	4042	227.100

Ինչպէս 1913 էն մինչև 1917 թուականը այս թիւերը մեծ փոփոխութեան ենթարկուած են, այսօր եւս հիմնովին փոփոխուած են. բայց մեք տուալ թիւերը այդ հինցած թուաւնչանիւրը, ցոյց տաւալ թէ Քուրքիս Համար ոչ Հողային և ոչ ալ ազգաբնակչան ինչիդ կար տէր գառնաւալ Շարուր-Նախիջևանի: Ինչպէս կը տեսնենք, այդ երկու գաւառները մօտ 4700 քառ. վերստ տարածութիւն կը բունեն, —չնչին քանակութիւն մը՝ բաղդաստիւով օտմ. կայսրութեան տարածութեան Հետ, որ աւելի քան 2 միլիոն քառ. վերստ տարածութիւն կը բունէր Այսօրուայ Քուրքիսան ալ, թէն փոքրացած, ուելի մօտ 800,000 քառ. վերստ տարածութիւն, միայն 8-9 միլիոն բնակչութեամբ: Ուրեմն, պահանջը չէ, որ կը միշտ զայն դիւրի Նախիջևան, քանի որ ունեցած Հողերը ամայն են և շատ աւելի Հարուստ քան Շարուր-Նախիջևանը. ոչ ալ ազգաբնակչութիւնը պիտի Հրապուրէր. նախ որ Քուրքիս չեն Նախիջևանի բնակիչները և Քուրքիսը Համար Հարիւր Հազարէն Հարիւր քառասուն Հազար թաթար և այլ շիաները չեն իրար այնպիսի ազգային քաղաքականութեան զրդիլ, որ նոյն կիւ պատերազմներ միշտ և քաղաքական բարդութիւններ ստեղծէին Հայերու, Ռուսերու և զուցէ Պարսիկներու Հետ: Եթէ իբրեւ ժողովուրդ արժէք ունենալ իրեն Համար, Քուրքիս պիտի գերազատէր Նախիջևանիցինըր փոխադրել իր գաւառի Հողերը. աւելցնելու իր Ֆիզիքական և Երեթական ուժը: Պարզ է որ, միայն քաղաքական շարժառիթներ ուել Քուրքիսան Պարագան տարեր է Արբէշանի Համար. որովհետեւ

1917 թուի վիճակագրոյցի Համաձայն Նախկրայի մօտ 140,000 միւսիւման ազգաբնակչութիւնը թէ կորցրով, թէ թուրու և թէ ցեղով կը պատկանի իրեն. լետայ Արբէշանը Քուրքիսոյ նման անտաճման տարածութիւններու տէր չէ, որ Հաշուի շանէն Նախկրայի փոքրիկ տարածութիւնը: Մօտ 75,000 քառ. վերստ. տարածութեան բաւող Արբէշանի Համար Շարուր-Նախիջևանի 4686 քառ. վերստը աւելցնելը անչիան գումար մը չէ: Միւս կողմէ, զգալի շահ է Նախիջևանի 145,000 թաթարները աւելցնել Արբէշանի ազգաբնակչութեան վրայ, Բազուի և Գանձակի նաչնաղներու սահմաններուն մէջ, ուր ուելին 2,500,000 Հոգի. (միայն թաթար, Քուրքիս մօտ 1,000,000): Այդ, Հասկնալի է երբ Հարցը քննենք զուտ եսական, թաթարական շահերու տեսակէտէն, անտեսելով միւս ժողովուրդներու շահերն ու գոյութիւնը: Եթէ Շարուր-Նախիջևանի ազգաբնակչութեան թիւը նկատի առնենք, երևութապէս իրաւունքը կ'իմնայ Արբէշանին, քանի որ ըստ 1917ի վիճակագրութեան ընդհ. ազգաբնակչութեան (227,000) 139,000 թաթարի պիմաց կայ 83,000 Հայ, այսինքն 59% թաթար և իսլամ, 36,6% Հայ: Կիմք ընդունինք ազգիւր ինքերոյն

իրաւունքը, միայն ըստ թուական մեծամասնութեան. այդ պարագային Համար ուելի ձեռնառու է Անդրկովկասի մէջ. մանաւանդ Արբէշտանի հանդէպ: Եթէ այդ հիմքերը ընդունուին, նախ Նախիջևանի գաւառի Ա. Ք. Գ. գաւառական երէն խոշոր մաս մը պիտի միացնէր Գորայտգետաղին և Սիւնիքին, քանի որ այդ գաւառականներուն Հայերը 48-50% կը կազմեն և Հար և այնպիսի սահմաններ գծել որ հայկական գիւղատիրերը ինչան Հայաստանի վրայ, իսկ թաթարական գիւղատիրերը Յան Նախիբային: Բայց այդ բաժանումով Նախիբայը կը դառնայ եղ ժապաւէն մը Արաքսի սփին վրայ: Երեւի այդ է պատճառը, որ չի գործարարել ազգերու ինքնորոշման սկզբունքը արդիւշատէս: Կարելի է տեսնուել երկրորդ կարեւոր հանգամանք մը, — Նախիբայը, որպէսզի մաս դառնայ Արբէշտանին, անհրաժեշտ է, որ Սիւնիքը միացուի Նայիպս անոր, քանի որ Սիւնիքը կ'իյնայ Արբէշտանի և Նախիբայի միջև: Այդ պարագային Նախիջևանը շրջապատող Զանգեզուրի 100,000 հայութիւնը պէտք է միացնել Արբէշտանին, որով 140,000 խլամ միացնելու համար Արբէշտանին, հարկ է 183,000 հայութիւն եւս միացնել (100,000 Զանգեզուր և 83,000 Եարուր-Նախիջևան), ինչ որ ոչ միայն անարդարութիւն է, այլ և խախտում ազգերու ինքնորոշման սկզբունքին, որովհետեւ Սիւնիք-Նախիջևանը-Եարուր միացնելու գաւառներուն մէջ Հայերը կը գառնան բացարձակ մեծամասնութիւն և ոչ թէ թաթարները: Կարելի պարագայ մընալ կայ. — եթէ Եարուր-Նախիջևանը կտրելի է միացնել Արբէշտանին, որու հետ հաղորդակցութեան միջոցներ չկան, ուրիշ բաժնուած է Հայաստանով և իր աշխարհագրութեամբ, կլեմայով և տնտեսութեամբ, ինչու կտրելի չէ այդ շրջանները միացնել Հայաստանին, որու մասն են կազմող միշտ անխելատակ ժամանակներէ մինչեւ երէկ, մանաւանդ որ 140,000 թաթար ակնիւրով Հայաստանի մէջ, թաթարներու համեմատութիւնը կը մնայ այնքան չնչին, որ կարելի չէ բազմաթիւ Հայերու թելին հետ՝ Արբէշտանի սահմաններուն մէջ: Մուսուստական կամ բոլշեւիկ ազրբէշտանցիները ազգերու ինքնորոշման սկզբունքին վրայ կանգնած են միակ Եարուր-Նախիջևանի մասին, քողարկելու համար իսկական դեռուածները. որովհետեւ եթէ լուրջ ըլլաւ այդ սկզբունքը, նախ իրենք պիտի հրամարեին Բագուի քաղաքացիութեան իշխանութեանէ, քանի որ հոն գտնուող 405,000 ազգաբնակչութեան 77 հազարը Հայեր են, 126,000ը Ռուսեր և Քիւրդեր, 182,000 խլամներ. (ըստ 1917ի վիճակագրութեան): Ուրիշ օրինակ մը, — Գանձակի նահանգին 1,275,000 ազգաբնակչութեան 783000ը խլամներ, 418,000ը Հայեր են. ինչու կը կարծուի, որ մեզ համար թանկ չեն Արբէշտանի մօտ կէս միլիոն Հայերը, իսկ Արբէշտանի համար թանկ է 140,000 թաթարը, զի 1917ի հաշիւով, մինչդեռ այսօր իրական թիւը 60,000ը չափելի: Ուրիշ օրինակ մը՝ Լեռնային Ղարաբաղէն, որ այսօր Արբէշտանի մէջն է, ըստ 1917ի վիճակագրութեան Զիվանշիլի մէջ կար 22,000 հայ, 17,000 խլամ, Եռչուի՝ 98,000 Հայ, 30,000 խլամ, Ջիլքուայի՝ 22,000 Հայ և ոչ մէկ խլամ: Եթէ Ազրբէշտանի դիկտարները ազգերու ինքնորոշման սկզբունքին չարած ըլլային, անդուստ այդ գաւառները պիտի տային Հայաստանին, բայց այդպէս չեն ընել, կ'աւանտ լեռնային Ղարաբաղը և Եարուր-Նախիջևանը: Ուրիշ, ազգերու ինքնորոշման սկզբունքը դատարկ խօսք է իրենց համար:

Թերեւս տնտեսական անհրաժեշտ պայմաններ կը ստիպեն Արբէշտանը՝ գործելու այդ անարդարութիւնը: Զկան այդպիսի պայմանները, մանաւանդ Արբէշտանի համար Նախիբային, ինչպէս ըսի, ան ծածաբ չունի իր երկրի երկրներ մացնելու Նախիբայ և կամ փորագրաւոր Նախիբայէն ստանալու: Անպայման Երեւանի վրայով պիտի կտտաբ այդ գործողութիւնը: Երկրորդ, Նախիջևանի մէջ չկան ոչ նաթի հորիւր և ոչ ալ այնպիսի հարստութիւններ որ ինքը չունենար սուստօրէն և չբաւէր իր և յաջորդ սերունդներուն: 70,000—80,000 տնտեսութի մշակելի հողերը չեն որ պիտի շահաբերեն զայն և ոչ ալ արտահանները, որոնց աղքատիկ արդիւնքը ուզէ չուզէ պիտի սպառին տեղի վրայ և Հայաստանի մէջ, և ոչ ալ իր ազգաբնակչութեան խառնութիւնը կամ հողի նուագութիւնը, քանի որ իր շրջաններուն մէջ անապատ մնացած ընդարձակ հողամասեր կան բամբակ և բրինձ արտադրող, մաս կողմէ, իր բնակչութեան աճումը այն չէ ինչ որ Խուսիոյ մէջ, որպէսզի մասձէր պահեստի հողեր ունենալ ապագային համար:



Թուրք և Արբէշտանեան բուն դիտումներուն և Նախիբայի ստեղծման գաղտնիքը կը գտնուի Նախիջևան գաւառի աշխարհագրական դիրքին մէջ:

Քարտէսին վրայ կը տեսնենք որ այդ փոքրիկ գաւառը ինկած է այնպիսի կէտի մը վրայ, ուր ամենակարճ և ամենալաւ ճանապարհները կը խաչաձեւ են Տանկաստանը և Ռուսական Լըրբէշտանը, իսկ միւս կողմէ պարսկական Արաբաստականը և Ռուսական Արաբաստականը կ'առնուին Նախիջևանը իր Զուլֆա կայարանով հանդիպելու կը կազմէ այդ երեք երկիրներուն համար: Այդ երեք երկիրներէն Ռուսական Արբէշտանը և պարսկական Արաբաստականը բռնուած են մեծ մասամբ թաթար ցեղերով, առաջինին մէջ 1,800,000է աւելի, իսկ երկրորդին մէջ մօտ 2,500,000: Արբէշտանեան և թուրք մտաւորականները ամէն միշտ անք հարած են, որպէսզի սահմանները վերան և մէկ Արաբաստական ստեղծուի պարսկական և Ռուսական հողերէն: Թէեւ այսօր ժողովրդական զանգուածներու մէջ դեռ չէ հասունցած Պարսկաստանէն Արաբաստականը կարելու միացը, բայց միացման գաղափարը կը տարածուի արագ և յամառ կերպով թէ համաթուրանականներու և թէ ազգասէր կամ բոլշեւիկ տարրերու կողմէ, ամէն մէկը տարբեր հռահակներով և բացատրութիւններով Մեզ շահաբերողն ալ այդ կէտն է միայն:

Այդ միացումը կրնայ ըլլալ Արտաբիլի, Լենկօրանի կամ Ղարասաղի արեւելքէն, կամ Արցախի, Սիւնիքի և Զուլֆայի վրայով: Առաջին միշտը այն տեսլամբարութիւնը ունի որ հաղորդակցութիւնը երկար է և դժուար. բայց առաւելութիւն մը կայ. — ազատ և հայկական խոչնդաններէ և իր աւջիւ մինչեւ թարիղ միայն թաթարներ են իսկ երկրորդ ուղղութիւնը կամ ը և ճանապարհը ակելի լաւ, բայց հարց կը ծագի Հայաստանէն անջատելու ոչ միայն Նախիջևանի, այլ և Սիւնիքի և Արցախի գաւառները: Հաւանական է որ Արաբաստականի և Արբէշտանի ազգասէրներն այս երկրորդ միշտը ընտրեն, իրենց գործը չարագանելու համար Հայաստանի կողմէն: Ինչպէս այն է որ թաթարներու ազա-

առաջման հարցը աւելի կը հետաքրքրէ ծածկիները քան իրենք՝ Քաթարները, և Աղբյուղէնի կամ Ատրպատականի Ռուսիայէն և Պարսկաստանէն անջատման խնդիրը աւելի կը զեկտվարուի Էնկիւրիէն, Պօլսէն, քան Քաւրիզէն և Բագուէն:

Վ Քուրբերը կորսնցուցած ըլլալով իրենց եւրոպական և արաբական երկրամասերը, միւս կողմէ Քուրբիոյ մէջ Քուրբ տարրը Ֆիլիքապէս տկարացած ըլլալով, կը ձգտին տարածել զեպի Արեւելք, ուրիշ եկած են և ուր կը գտնուի իրենց բուն հայրենիքը և մայր փոլոսողը: Վնենք Ատրպատականը և Ալբերէտը կը համարին ոչ միայն ճանապարհ այլ նպատակին հասնելու, այլ և այլ երկու երկիրներու ժողովուրդները կը ձանձնան իրենց ազգակցի, և զանոնք իրենց հովանիին տակ առնելու համար կ'ընթացեն ոչմիայն ընդարձակել իրենց երկիրը, այլ եւ իրենց ազգին թիւը աւելցնել առ նուազն 4 միլիոնով: Ելլ Նպտակակներուն հասնելու համար, նախ անհրաժեշտ է — թըրքական տեսակէտով — որ բնու գոյութիւն չունենայ ոչ Ֆիւլփոլտան, ոչ Հայաստան և առ նուազն Արաքսի հովիտը ամբողջապէս գառնայ իր սեփականութիւնը: Իսկ Արաքսի հովիտէն, ամենազգայուն և անհրժեշտ կէտը կը դառնայ այլ պարագային Ետրուրը, Եսխատախի կայարանով և Նախիջեանը իր Զուլֆա կայարանով Ի հարկէ այս ձգտումին մէջ կայ և ռուսական հետաւոր վտանգը չէզոքացնող միտքը, կայ և Հայաստանի սնչեացման հարցը և կամ այլ գաւառներէն տնտեսապէս օգտուելու խնդիրը: Բայց ատեն երկրորդական, յարակից նպատակներ են. բուն ծրագիրը մեր մասնանշածն է:

Դիմենք նորէն թուանշումներուն:—

Քուրիզ-Զուլֆա-Երեւան, Թիֆլիս-Բագու երկաթուղու երկայնութիւնն է 1158 վերստ:

Քաւրիզ-Զուլֆա-Մեղրի-Ալիաթ-Բագու, շինուող երկաթուղու երկայնութիւնը՝ 577 վերստ:

Ինչպէս կը տեսնենք, երկու Աղբյուղէններու կեդրոններուն միջեւ ճամբան երկու անգամ կը կարճնայ և ուրեմն Զուլֆան և Նախիջեանը մեծ կարեւորութիւն ունին համաթուրանականներուն համար. առենք ծածկաստանի կողմէն Հեռաւորութիւնը զեպի Քաւրիզ և զեպի Բագու, ուր կը յանգին իրենց նպատակները: Ցանկական սահմանը կը վերջանայ Արարատ կայարանի դիմացը. ուր կը սկսի Նախկարախ երկաթուղին:

Եթէ ելակէտ ընդունինք Արարատ կայարանը, այլ պարագային Հեռաւորութիւնը կ'ըլլայ:—

Արարատ-Զուլֆա. — Քաւրիզ — 269 վերստ.

Արարատ Զուլֆա Մեղրի, Ալիաթ, Բագու, 592 »

Իսկ եթէ Քուրբիա ուզէ միւս ճանապարհներով կապուիլ Բագուի և Քաւրիզի հետ, ամենաւաճակի երկաթուղապատիւնը չհեռաւորութիւնը կ'ըլլայ:—

Թըքական սահմանը. — Ալեքսանդրապոլ-Թիֆլիս. — Բագու, 750 վերստ

Թըքական սահմանը. Պաթում. Թիֆլիս. Բագու 860 վերստ:

Թըքական սահմանը Բաթում. Թիֆլիս. Երեւան, Զուլֆա-Քաւրիզ, 980 վերստ

Բազմաթիւ սահման ճամբաները այս երկրորդ գծին

հետ, կը տեսնենք որ անհամեմատ կը կարծնայ ճանապարհը ոչ թէ տունեակ այլ, հարիրաւոր վերատիրոջ և Զուլֆայի կարեւորութիւնը կը բարձրանայ թէ ազգամայն և թէ տնտեսապէս: Առիկ գտտ, այս կարճ ճանապարհը ան առաւելութիւն ունի Քուրբերուն համար, որ չանցնիր վրացական և հայկական հողերէն, այլ մեծ մասով կ'անցնի Նախիջեանէն և Թաթարաբնակ Բագուի շրջաններէն, և միայն 50,60 վերստ: Միւնիքի Հայկական հողէն, որ բնականօրէն անցանկալի և մահաւան արժանի կը համարուի թուրք մտայնութեամբ:

Զուլֆայի հռոմեակութիւնը միայն յիշեալ առաւելութիւններով չի սահմանափակուիլ: Տրասպլոն-Էրզրում-Զուլֆա, Քաւրիզ ճանապարհները զին առեւտրական ուղիներ են, ուր այսօր մեծ մասով արգէն երկաթուղիի գիծը կ'անցնին:—

Տրասպլոն, Բալլարոզ — Էրզրում — Բայազետ — Մակու — Եսխատախի-Զուլֆա, 860 վերստ:

Քաթում-Թիֆլիս-Երեւան-Զուլֆա, 843 վերստ:

Ուրեմն գրեթէ նոյն երկարութիւնը, որով Ցանկաստանը, Սեւ Մովը հիմք ունենալով, թէ առեւտրական և թէ դիւրոքական տեսակէտէն կրնայ մրցիլ Բաթումի դէմ պարսկական Ատրպատականի մէջ: Եւ դեռ աւելին, եթէ Սեւ Մովըն գիծը անցնի Արաքսի հովիտէն զեպի Զորսի և զեպի Զուլֆա, 219 վերստ. կը կարճնայ Սեւ Մով-Զուլֆա գիծը Բաթումէն, որով կրնայ անգործածուեան գոտապարտեղ Բաթումը, Պարսկաստանի համար, իսկ դիւրոքական գերակշռութիւնը կը թայ իր կողմը:

— Այս օրինակները կը բունն ցոյց տալու Զուլֆա-Եսխատախի և շրջաններուն կարեւորութիւնը ազգական, տնտեսական և որ էպակնն է՝ համաթուրանական տեսակէտներէ: Այս է պատճառը որ Քուրբիան Պրէսթ Լիթլուքի դաշնագրով իրեն յանձնուած Բաթումի նաւահանգստէն և ճանապարհներէն աւելի վերաւթեմքը հրաժարեցաւ, քան աւերակ կոչուեալ մէջ ինկած Զուլֆա, Եսխատախի կայարաններէն և անոնց շրջապատ Նախկարախ, զոր կրցաւ ինքնավոր դարձնել, անջատել Հայաստանէն և տալ Ալբերէնսին:

\* \* \*

Այս բոլորէն կը հետեւի որ Նախիջեանի խնդիրը պարզ գուտախ մը բռնադատման հարց չէ, և ոչ այլ այնտեղ եղած պոլքարները ծնած են պարզ թիւրիմացութիւններէ, մուսուանութիւններէ և այլ տնտեսական փոքրիկ պատճառներէ: Եթէ Մուշի, Ջիվանիքի մէջ վիճելի հարցեր կան — Հողային կամ տնտեսական — Հայաստանի և Ալբերէնսի միջեւ այստեղ աւելի մեծ է վտանգը: Նախիջեան-Ետրուր գուտաները իրենց աշխարհագրական դիրքին շնորհիւ առանցքը դառնալով համաթուրանական զարգաբաններու և երկու Ալբերէնսներու միացման ծրագրին իրագործման և ըլլալով կեդրոնական վայրը Արեւելքի ճանապարհներու բաժանման, Հայաստանէն իսպառ բռնադատման վտանգի տակ են: Այլ բռնադատման շարժում սահմանափակուի Նախիջեան գուտով, այլ յառաջաբանը պիտի ըլլայ Հայաստանէն բաժանելու Արցախն ու Միւնիքը և Դարպազանը, որով յետոյ Հայաստան անուշը անիմաստ կը դառնայ և հայ փոլոսողը կը

գոտապարտուի Ռուսահայաստանի մէջ ալ այն վիճակն անհնալ, ինչ որ ունեցաւ Տաճկահայաստանի մէջ: Նախկրայի ստեղծումը, Թուրքիոյ ազդեցութեան ենթարկումը, նոյնիսկ անուղղակիօրէն, Թորհրդային Արդպէշտի միջոցով, նախանշան է համաթորանահրանութեան յազմանակի և իրական վտանգ մը՝ Հայաստանի և Անդրկովկասի համար: Այդ վտանգը կը սպառնայ նոյնիսկ կարմիր, պղծելիկ Հայերուն: Գեշ չէր ըլլար եթէ պոլշեիկները լրջօրէն սերտէին Կարսի և Մոսկուայի պայմանագրութիւնը և իրենք զիրենք չօրօրէին թէ Նախիջեանը տրուած է Խորհրդային Արդպէշտին, և ոչ թէ Մուսավաթ հակայեղափոխականներուն: Վայտեղ կայ հիմնական քաղաքականութիւն մը որ քնաւ չի ճաննար յեղափոխական և հակայեղափոխական՝ Նախկրայը Հայաստանէն խլելը կը նշանակէ Հայաստանը իր ժողովուրդով գերեզման տանելը: Այդ պարագային անբանները միայն կրնան հաւատալ եղբարութեան հռուստրութեան ու արդարութեան բռնաբարուած խօսքերուն: Եթէ Մուսավաթականներն ու Գաշակացականները այս կնճառտ խնդիրը չկրցան լուծել, թող պոլշեիկ Հայերն ու Թաթարներն լուծեն: Այն ատեն միայն իրաւունք կունենան ըսելու թէ խաղաղութիւն բերին այդ թշուառ գաւառներուն: Չեն տեսներ որ Կարսի պայմանագիրը ֆերման մըն է Հայոց բնաջնջման և Հայաստանի վերացման:

ՌՈՒԹԷՆ

### ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ

### ՅԵՂԱՓՈՒԹԻՒՅԻՆՆ ԵՆ...♦

„Կար ժամանակ (1918) — ասում է Ռուս. բոլշեիկներն կուսակցութեան վերջին Խորհրդաժողովը — երբ մենք բոլորս սպասում էինք, թէ պրոլետարական յեղափոխութեան յաղթանակ է տեղի ունենալու... մի րանի ամիսների կամ նոյն իսկ շաքարքերին ընթացքում:“

„Պարզեց, որ... համաշխարհային յեղափոխութեան զարգացումը շատ աւելի դանդաղ ընթացաւ:“)

Արեւ խօսքով 1925 թւին վերջապէս „պարզեց“ բոլշեիկների համար այն, ինչ որ դեռ 1918 թւից ասում և կրկնում էին ընկերվարական մտքի և գործի ղեկավարները աշխարհիս բոլոր անկիւններում: Այսինքն՝ որ համաշխարհային պատերազմից յետոյ ստեղծւած անտեսական, քաղաքական և հոգեկան վիճակի մէջ անհնարին է ընկերվար յեղափոխութեան յաղթանակը քաղաքակիրթ երկրներում:

Աւազին հիասթափութիւնը բոլշեիկները կրեցին Գերմանիայից: 1918 թւին Նրանք ոչ թէ շարաթներով, այլ օրերով և ժամերով էին սպասում ընկերվարյին յեղափոխութեան այդ երկրում: Manchester Guardian-ի թղթակից Մ. Ֆրիլիպ Պրայը իր «Ռուսական Յեղափո-

խութիւնը“ գրքում պատմում է, թէ կէս ժամայ զորոյի ընթացքում, որ ինչն ունեցել է 1918 թւին Լէնինի հետ, վերջինս երեք անգամ մտնում է հետախօսին՝ գերմանական ընկերվարյին յեղափոխութեան աւտիտն առնելու համար: Սովյան — շարունակում է բոլշեիկներն խորհրդաժողովը — գերմանական յեղափոխութիւնը աւելի ուշ հասաւ — և բանից դուրս եկաւ, որ այդ դեռ ևս պրոլետարական յեղափոխութիւն չէ, այլ այնպիսի յեղափոխութիւն, որը միայն վերացրեց միջնեւմիտ, բայց ոչ բուրժուազոյի իշխանութիւնը!):

Աւելի բազումը շեղան ընկերվարյին յեղափոխութեան անկալութիւնները այլ երկրներում, թէև բոլշեիկները ժամանակին ամեն մի հրապարակային ցոյց, ամեն մի գործադուլ հռչակում էին իրենց թերթներում՝ իրրև այդ յեղափոխութեան ազդանշան: Ամերիկան, Անգլիան և ընդհանրապէս հիւսիսային Եւրոպան գրեթէ չշարժեցին իրենց տեղից, սովանական երկրներում շարժումն աննշան ցոյցերից այն կողմը շնացաւ, իսկ այն երկրներում — Հոնգարիա, Բուարիա, Սարանիա, Բուլղարիա — ուր նա քիչ-շատ լուրջ բնոյթ ստացաւ: խեղդեց հազարաւոր աշխատաւորների արեան ծովում:)

Այս բոլորն այսօր չէ միայն, որ տեսնում են մեր առաջնորդները. հապա ինչո՞ւ էին մինչև հիմա մեզ համաշխարհային յեղափոխութեան հեքեմութեանով սթարում և շինծու լուրերով ժողրեցնում — կը հարցնէ շարքային, միամիտ բոլշեիկը: Կամ ինչո՞ւ էին Նրանք համաշխարհային յեղափոխութեան համար դոմիտաների անկուշտ որդորը նետում սովալուկ ուսւ ժողովրդի բերնից կարած հարիւրաւոր միլիոնները — Որովհետև, հաստատացնում է Խորհրդաժողովը այդպիսի միամտներին, “նոյն իսկ այդպիսի (բուրժուազան) յեղափոխութիւնը Գերմանիաում, մի շարք այլ երկրներին յեղափոխական ցնցումների հետ միասին, բուական էր, որպէսզի պրոլետարական յեղափոխութիւնը Ռուսաստանում կարողանայ ժամանակ շահել և ամրանալ իր գիրքում:”)

Եւ եթէ այս բացատրութիւնից յետոյ մի նոր Պատւ Լէվի 3) վեր կենայ և Մոսկվայի դիկտատորների կրեսին չպրտի, թէ Նրանք համաշխարհային աշխատաւորութիւնը թնդանովային միս են համարում իրենց իշխանութիւնը հաստատ պահելու համար, թէ Գերմանիայում սարքած յեղափոխական ցնցումներին զոհ գնացած տանեակ հազարաւոր բանուրների արիւնը պիտի ծանրանայ Նրանց խղճի վրայ ևն ի՛նչ լուսամբներ սակը, որ բոլշեիկները շեն թափի այս նոր „սենեգատ“ զլինս...)

1) Ibid. 73.  
2) Ibid. 73

3) Paul Levi գերմանացի յայտնի կոմունիստ էր, որ 1922 թւին մերկացնելով ուսւ բոլշեիկների մեղադրութիւնը Մոսկուական հազարաւոր բանուրների կոտորածի մէջ՝ իր բազմաթիւ համախոհների հետ անդառնց գերբ. կոսակցութիւնից և միացաւ ընկերվարականներին:

\*) Տես Ռ. Կ. Կ. (Բ) 14-րդ կոմպերեցիայի Բանաւ, ձեւերը՝ Երեւան, 1925. էջ 73:

Այսպէս ուրեմն Համաշխարհային յեղափոխութիւնը բողջեփնիկերի անհղով յետաձգած է: Ի՞նչ է նշանակում սա: Սա նշանակում է, որ «կապիտալիզմը կայունանում է»<sup>3)</sup> Սրբայ նոր խօսքը սա է Հիմա խորհրդային երկրներում: Նրա քացաարութեամբ են գրադած Ստալինը, Ջինովիեվը, Լոտինը, Կնորինը և ամենը, ում խօսքը որչ կէր կարող է ունենալ զանգաւանների աջբում: Մեզ շեն հասնում բողջեփնիկան բողջ Տրատարութիւնները են: Բայց այն, ինչ որ ձեռքի տակ ունինք, բաւական է համոզելու համար, որ «կապիտալիզմի կայունացման» թէկը և այդ թէկից հանող քաղաքական հետեւութիւնները իսկական իրարանցում են առաջ բերել բողջեփնիկան շրջաններում: 3)

Եւ հասկանալի է այս իրարանցումը: Իսեղծ մարդիկ ամբողջ ետօք տարի կորած արտաքին աշխարհից եւ անգիտակ այնտեղի իրադարձութիւններին՝ մի բերան այն են լսել, թէ կապիտալիզմը մեռած է կամ հոգեւորքի մէջ, իսկ Համաշխարհային յեղափոխութիւնը բռնկած է կամ բռնկելու վրայ: Ինչպէ՞ս հաշտեն նրանք հիմա այն մտքի հետ, որ «Եւրոպայում» յեղափոխութեան անգաւաւութիւն է սկսւել՝ իսկ կապիտալիզմը, ընդհակառակը, յալճահալիով իր առջև ծառայած գծարութիւնները (Գերմանիայի հատուցման խնդիրը, Չինաստանի շահագործման խոչընդոտները, գաղութային քաղաքականութեանց հակամարտութիւնները ևն.) սկսել է կայունանալ: 4)

Այս իրարանցմանը հակադրելու նպատակով բողջեփնիկան շիփերը առաջ են քաշում մի շարք անդնացուցիչ պարագաներ, որոնց հետ արժէ ծանօթանալ, գաղափար կազմելու համար թէ ի՞նչ կատարելութեան են հասցրել նրանք մերկ իրականութիւնը ծամարտակութիւններով քաղաքիկու արեւտար:

Առաջին մեղմացուցիչ պարագան այն է, որ կապիտալիզմի կայունացումը տեւական չէ, այլ ժամանակաւոր, հետեւաբար ի գուր է իրենց հետեւորդների անհասնատութիւնը և հակառակորդների, — գրանց թւում է ընկերավարականներին — չարախնդութիւնները):

Հարց է ծագում, թէ ի՞նչն է այս աշխարհում մըշտական, որ կապիտալիզմը կամ նրա կայունացումը մըշտական լինի: Եւ ապա՝ կայ երկրագնդի վրայ մի հատիկ ընկերավարական, որ համոզւած չլինի կապիտալիզմի ժամանակաւոր լինելու մէջ: Անկասկած ոչ: Բողջեփնիկների շափ է նրանցից էլ աւելի ընկերավարականները գիտեն, որ կապիտալիզմը ներքին զարգացման օրէնքով կամ հակագրութիւնների հետեւանքով վաղ թէ ոչ պետք է տեղի տայ ընկերային յեղափոխութեան գրոհի առար:

3) Տես Վ. Կնորինի յօդուածը «Կոմունիստ» իNո 2-ում Ստալինի գեկուցումը Թ. Կ. Կ. (Բ.) Մոսկվայի կազմակերպութեան ակտիւ ժողովում: Ստալինի «Հարցեր ու Պատասխաններ» յօդուածաշարը «Պրավդա»-ում: Ջինովիեվի «Պատերազմների և յեղափոխութեան գարաշընանը» նոյն «Պրավդա»-ում:

4) Տես Թ. Կ. Կ. XIV Կոնֆերանցիայի աշխատանքների արդիւնքները: Երեւան 1925, էջ 4 և 10-10:

Նրանց միջև վեճը այն հարցի շուրջն է եղել միայն, թէ արդեօք զարգացման ներկայ փուլի մէջ ընկերային-յեղափոխութեան ժամը հասած է թէ ոչ: Ընկերավարականները կարծում էին, որ չէ հասած, որովհետեւ աշխատաւորութիւնը կազմակերպական ուժի և գիտակցութեան այն վիճակը չէ ներկայացնում, որն անհրաժեշտ է յաղթական ընկերային յեղափոխութեան համար, իսկ անխուսափելի պարտութիւնը կանխատեսելով յեղափոխութեան ձեւնորմիկը անմտութիւն է: Բողջեփնիկները կարծում էին, թէ աշխատաւորութիւնը իր ներկայ վիճակով էլ կարող է ընկերային յեղափոխութիւն կատարել և կապիտալիզմը տապալելով ընկերավարական կարգերի դիմեք փաստերը եկան ապացուցանելու, որ նրանք սխալում են, և այդ փաստերի հրամայական ձեւնորմիկ հիմաստիկան են ընդունել: Ըր ընկերային յեղափոխութիւնը վաղաժամ է կամ կապիտալիզմը դեռ եւս կայուն է: Եւ ինչ արժէք ունի նրա ժամանակաւոր լինելու յայտարարութիւնը, կամ ի՞նչ չափի միասնութիւն են ենթադրում նրանք իրենց ունեցիկների և ընթերցողների մէջ: Եթէ կարծում են, թէ նման յայտարարութիւններով կարող են փոքրացնել իրենց սխալի անծոթութիւնը:

Շիփերդ պարագան, որով բողջեփնիկան չէֆէրը ուզում են քաղաքիկ իրենց սխալը, կամ միեմարեք «կապիտալիզմի կայունացման» յայտարարութիւնից շջմած ընկերներին, հետեւեալն է: Նրանք գտել են Լէնինի գրածքներից մէկում («II Կոնտրեմափոխակի անանկութիւնը») որ նա համաշխարհային յեղափոխութեան ընթացքը երեք հանգրուանի (Խոսք) է բաժանում: ա) ընդհանրապէս յեղափոխական վիճակ (բ) անմիջական յեղափոխութեան վիճակ (գ) ուղղակի յեղափոխութիւն: Արդ նրանք աւուժ են իրենց հաւաստացողներին: Ճիշտ է, ներկայումս ընկերային յեղափոխութիւն չկայ (գ) և ոչ էլ անմիջական յեղափոխութեան վիճակ (բ) բայց կայ ընդհանրապէս յեղափոխական վիճակ (ա): 1)

Ինչո՞ւմն է կայանում այս ընդհանրապէս յեղափոխական վիճակը — նրանում, որ 1) Կապիտալիստական ընթացիկ անտեսական ներհակութիւնները չեն լուծւած, որ 2) Բուրժուական Եւրոպան յղի է ինկերիալիտական պատերազմներով, որ 3) Գաղութներում սկսւել են յեղափոխական խմորումներ և վերջապէս, որ 4) Խորհրդային իշխանութիւնը շարունակում է գոյութիւն ունենալ և մինչեւ իսկ «սմիւնա» Ռուսաստանում 2):

Այս կէտերից առաջին երեքը կապիտալիստական հասարակարգի սոցիալական անտանիշներն են հանգիստանում: Ասել թէ անտեսական ներհակութիւնները չեն լուծւած, կամ նւաճողական պատերազմների կարելիութիւնը և նոյն իսկ անխուսափելիութիւնը չէ վերջացած, կամ թէ շահագործող գաղութային ժողովուրդների մէջ յեղափոխական խմորումներ կան — այդ նշանակում է պարզապէս ասել թէ կապիտալիզմը կայ և կամ կապիտալիզմը կայունացել է: Լետեւաբար այս երեւոյթների

1) «Ռ. Կ. Կ. (բ) 14-րդ Կոնֆերանցիայի բանաձևերը» էջ 63:

2) Ibid. էջ 69: A.R.A.R.®

իշխատակնութիւնը միամտներէ աչքին փոշի ցանելուց աւելի ոչինչ չէ նշանակում:

Գաղով խորհրդային իշխանութեանը՝ մենք նրա «ամբաստում» մասին կը խօսենք ստորեւ: Այստեղ հարկ ենք համարում նկատել, որ իրականութեան բացայայտ խեղճութիւնը և նշանակում բոլորեցիկեան կուսակցութեան խորհրդաժողովի այն պնդումը, թէ «Սոցիալիստական խորհրդային Հանրապետութիւններէ Միութեան գոյութիւնն իսկ շարունակում է յեղափոխականացնել ողջ աշխարհը»<sup>3)</sup>

Մեր այս պնդումը անաւարակէիտրեն հաստատում է այն ընդհանուր գիմագարձութեամբ, որ սկսած է համաշխարհային աշխատաւորութեան մէջ հանդէպ խորհրդային իշխանութեան արտասահմանեան գործակալների գիրքը կատարող կոմունիստական կուսակցութիւններէ: Չնայած կոմունիստների բոլոր սննդքերին և խորհրդային Ռուսաստանի առատ դրամական օժանդակութիւններին՝ այդ կուսակցութիւնները հետզհետեւ դաւնում են զանցանելի քանակութիւններ, որովհետեւ նրանցից հեռանում են աշխատաւորական զանգեւորները: Փոստների համար երկար պրպտելու կարիք չկայ: Բաւական է միայն համեմատել անդամների այն քանակը, որ արտասահմանեան կոմունիստական կուսակցութիւնները ներկայացրել են կոմունիստական իտեղնասիրտայի վերջին երկու համագումարներին: Երկու կուսակցութեան Internationale Presse Korrespondenz-ը իր 102-րդ համարում հետեւեալ թիւերն տալիս է այդ մասին<sup>3)</sup>:

Երկիր	IV	V
	Համագումար	Համագումար
1. Գերմանիա	226.200	350.000 (մոտ).
2. Փրանսա	78.828	50.000
3. Իտալիա	24.638	12.000
4. Անգլիա	5.116	3.000
5. Ռուսիան	2.000	2.500
6. Տաճկաստան	300	250
7. Լեհաստան	10.000	5.000
8. Էստոնիա	2.800	3.250
9. Լատվիա	1.500	1.000
10. Շվեդիա	12.143	12.000
11. Նորվեգիա	48.000	16.000
12. Դանիամար	1.200	700
13. Հոլանդիա	2.500	1.700
14. Քիւմբիլիա	517	590
15. Զեյթերիա	5.200	4.000
16. Բուլգարիա	450	450
17. Սլովակիա	5.000	5.000
18. Պորտուգալիա	1.500	700
19. Հեխտոլանդիա	170.000	130.000
20. Կանադա	4.810	4.000
21. Աւստրալիա	500	250
22. Հարաւային Աֆրիկա	200	400
23. Մեքսիկա	1.500	1.000
24. Արգենտինա	3.500	3.500
25. Չիլի	2.000	2.000
26. Ուրուգուայ	1.000	600
27. Բրազիլիա	500	350
28. Պարակուստան	1.090	600

Եթէ այս է արտասահմանեան կոմունիստական կուսակցութիւնների վիճակը պաշտօնական թիւերով, ապա

հասկանալի է, թէ նա ինչ կը լինի իրականութեանը: Որովհետեւ շարժառէք է մտանալ, որ բոլորեցիկեան ազգերից բոլորը պաշտանական թիւը, մանաւանդ էլ եթէ նա ազգասիրտ նշանակի թիւուն ունի, գրեթէ միշտ արբերում է իրականութիւնը: Այսպէս օրինակ՝ գերմանական կոմունիստ կուսակցութեան օրգան Rote Fahne-ն նախ անցեալ տարւոյ աշնանը պարանքով գրել էր, թէ կուսակցութեան վճարող անդամների թիւը 40,000-ի է հասնում<sup>4)</sup>, իսկ կոմիտեներն IV Համագումարում 224,200 անդամ է արձանագրած: Կամ օրինակ՝ V ամագումարում գերման կոմունիստական կուսակցութիւնը հանդէս է եկել "Տոտաւորապէս" 350,000 անդամով, որ միակնական անհրաւրեան պէտք է համարենք, եթէ ի նկատի ունենանք, որ ըստ նոր Rote Fahne ի այդ ժամանակ կոմունիստների թիւը բերլինում, որ կուսակցութեան ուժի գլխաւոր կերպրանաւորին է, հաւասար էր ընդամենը 18-617 հոգու, իսկ Բրանդենբուրգի մնացած վայրերում՝ 3.564 հոգու<sup>1)</sup>...

Բայց եթէ բոլորեցիկների պաշտանական թիւերն իրականի տեղ էլ ընդունելու լինենք ինչ եղանակով թիւն կարող ենք հանել նրանցից.—այն, որ խորհրդային իշխանութեան «ամրացումը» զուգահեռական գնում է արտասահմանեան կոմունիստական կուսակցութիւնների տեղաւորութիւնը — բայց Գերմանիայից է մի քանի անշանկ երկրների կուսակցութիւններին ՚սակցութեան բոլորեցիկները ընկերային յեղափոխութիւն արովհետեւ Տէնց կոմունիստական կուսակցութեան յեղափոխութիւն են հասկանում՝ կը նշանակէ նրանք դիտաւորեալ կերպով մոլորեցնում են իրենց հետեւորդներին խորհրդային իշխանութեան «ամրացումը» կամ գոյութիւնը համաշխարհային յեղափոխութեան ազգիկ ներկայացնելով:

Սակայն նման խեղճութիւնը իրականութիւնը տեւականօրէն թագցնել չի կարելի: Իրականութիւնը — մերկ, աղաղակող իրականութիւնն այն է, որ Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը Տէնց միայն իր գոյութեան հետ անխզելիօրէն կապած հակաընկերակրական և հակաաշխատաւորական երեւոյթներով ամենուրեք անդամաւոր էլ է աշխատաւորութեան յեղափոխական թափը և թեւաւորել բուրժուազիային: Իսկ այն երկրներում, ինչպէս Հունգարիան, Բուլգարիան, Իտալիան, Բուլղարիան են, ուր աշխատաւորութիւնը միամտութիւն կամ յիմարութիւն է ունեցել այդ իշխանութեան ներշնչմանը կամ սազարանքերով շարժելու՝ այսօր նա ցոխրաւած ընկած է Փաշիպի կամ հակաընկերակրական երկաթեայ կուռնիների տակ:

Վերջապէս երրորդ պարագան, որ մասնանշում են բոլորեցիկները «կապիտալիզմի կայունացման» սպաւորութիւնը թուլացնելու համար, այն է, թէ այդ կայունացումը հակակշռում է խորհրդային Հանրապետութիւնների Միութեան տնտեսական պարզացումով և քաղաքական ամրապնդումով<sup>2)</sup>:

<sup>3)</sup> Ibid. էջ 70:  
<sup>3)</sup> Յիշատակում ենք միայն այն երկրները, որոնք երկու համագումարներին էլ անդեկութիւն են տւել կոմունիստականների քանակի մասին:

1) Տես «Verwarts» 1924 Նոյեմբեր 5-ի համարը:  
2) Տես «Ռ. Կ. Վ. XIV կոմիտեներիցայի արդիւնները» էջ 4 և Ա. Կնորինի յոգածած «կոմունիստ»ի No 2.ում էջ 3:

Քննեք նախ խորհրդային Միութեան անտեսական զարգացման խնդիրը Ինչու՞նք է վայանում այդ զարգացումը.— Երանու՞մ, որ «գիւղատնտեսութիւնը բարձրանում է և նրա ապրանքայինացումն աճում. որագործէն ծաւալուում է խոշոր արդիւնաբերութեան աշխատանքը և լաւանում է տրանսպորտը, բարձրանում է աշխատանքի արտադրականութիւնը, ընդարձակուում է աւելարկան շրջանառութիւնը և վճռական շարժում է կատարուում դէպի գիւղատնտեսութեան ու արդիւնաբերութեան արտադրանքների հաւասարեցումը. գաղտնիքը և էմիսիան և դրան զուգընթաց աճում է պետական բիւջէն — պրոցեսիկ Ս. Խ. Մ. Լ. տնտեսութեան վերականգնման արդեակ հիմնական փաստերը<sup>1)</sup> 1) խոստովանեցէք, ընթացող, որ բուլշևիկական խորհրդաժողովը գծած տնտեսական զարգացման այս պատկերը գեռ ոչ մի նշանախեցով չէ տարբերուում որ և է, թէ՛կուզ ամենատիպիկ կուսակալախոսական երկրի զարգացման պատկերից: Բայց առաջ անցնենք:—

Խորհրդային Միութեան անտեսագործութիւնը, ինչպէս յայտն է, գնում է երկու գծով, մասնաւոր սեփականաիրական և պետական կապիտալիստական:

Առաջին անտեսագործութեան այն սովորական ձևն է, որ ամէն տեղ ընկած է կապիտալիստական հասարակարգի հիմնում Այս ձեւի դէմ մի քանի տարի շարունակ կեանքի է մահուան պայքար մղելուց յետոյ բուլշևիկները հիմա ոչ միայն հաշուել են նրա հետ, այլ և բոտ ամենայն նպատակով են նրա զարգացմանը նրանք խրախուսում են անհատական նախաձեռնութիւնը, թողլ են տալիս, որ նա շահագործէ բանւորական աշխատանքը քաղաքում և գիւղում, վարկեր են բանում նրա համար, եթէ նա ընդարձակուում է շահագործման ասպարեզը ևն., կարձ՝ գործում ևն ճիշտ և ճիշտ «կապիտալիզմի կայունացման» ոգով:

Երկրորդը, որ ումանք թիւրիմացաբարողակում են իրբեւ պետական սոցիալիզմ, պետական կապիտալիզմի այն ձևն է, որ գործադրուում է ժամանակակից բուրժուական պետութիւններից շատերի մէջ գլխաւորապէս հաղորդակցութեան միջոցների, մասամբ նաև արդիւնաբերութեան այլ ճիւղերի շահագործման համար: Բայց որովհետեւ խորհրդային Միութեան մէջ, շնորհիւ արդիւնաբերութեան ազգայնացման, պետական կապիտալիզմը գործնութեան շատ աւելի ընդարձակ սպարդեզ ունի, քան որևէ ուրիշ երկրում, այդ պատճառով նրա անտեսակարգը հակադրուում է բուրժուական պետութիւնների անտեսակարգին:

Սակայն մենք այդպիսի հակադրութեան համար հիմքեր չենք գտնում: Նախ և առաջ՝ վերոյիշեալ տարբերութիւնը քանակական է և ոչ թէ էական: Ըստ էութեան՝ ինչպէս բուրժուական երկրներում, նոյնպէս եւ խորհրդային Միութեան մէջ, պետական կապիտալիզմը հիմնւած է աշխատաւորութեան շահագործման վրայ: Ինչպէս այնտեղ, նոյնպէս և այստեղ աշխատաւորի գլխին

կանգնած է գործարանային բիւրոկրատիան իբրև տէր և: տնօրէն նրա ճակատագրի Աբրջայեւ երկու տեղում էլ աշխատաւորութիւնը այլ միջոց չէ գտնում իր շահերը: գործատիրը դէմ պաշտպանելու համար, բայց եթէ գործադուլը, և ինչքան յայտնի է. Գոնբասի անխաճանքերում աշխատողները աւելի՛ յաճախ են դիմում գործադուլի, քան գերմանական կամ զիւցերական երկաթուղու բանուորները:

Այնուհետեւ՝ խորհրդային Միութեան անտեսական քաղաքականութիւնը տանում է դէպի պետական կապիտալիզմի աստիճանական կրճատումը: Սրա պատճառները բազմաթիւ են և Աճականն այն է, որ խորհրդային անտեսագործութեան պայմաններում պետականացած արդիւնաբերական ձեռնարկները, շնայած արտադրած ապրանքների թանկութեանը, փաստ են ցոյց տալիս և պետական գանձարանի վրայ ահապին բոն բարգում իրենց գոյութիւնը քարը տալու համար: Այս բանից սպառաւելու համար՝ խորհրդային իշխանութիւնը ազգայնացրած ձեռնարկները պետական կապիտալիզմի շրջանակից հանում և մէկը միւսի յետեւից յանձնում է մասնաւոր ձեռնարկունեի շահագործմանը. մի բնով՝ որ անհնարին կը լինէր, եթէ պետական կապիտալիզմը նրա մօտ այլ նշանակութիւն ունենար, քան թէ բուրժուական պետութիւնների մօտ:

Ամիսիկով՝ այս ամենը մենք տեսնում ենք, որ խորհրդային Միութեան անտեսական զարգացումը ոչ այլ ինչ է, բայց եթէ «կապիտալիզմի կայունացման» երկու լիմիտներից մէկը: Այդ զարգացումը ցոյց է տալիս, որ կապիտալիզմը վերագրուում է իր դիրքերը ոչ միայն Եւրոպայում և Ամերիկայում, այլ և խորհրդային իշխանութեան սահմաններում — ահա բուրժու:

Բայց չէ՞ որ բուլշևիկական խորհրդաժողովը որոշել է «ամրացնել մեր ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական սկզբունքները<sup>1)</sup>»: Դասեն մեզ չէ՞ որ նա դրա համար ծրագրել է գիւղատնտեսական և վարկային, արհեստագործական և սպառողական գործակցութիւններով համայնական տնտեսութեան ձեւերը զարգացնել կամ չէ՞ որ նա վճռել է ամենախոս պետական հսկողութեան տակ պահել երկրի տնտեսական կեանքը, որպէս զի կապիտալիստական կարգերի վերականգնանացումը անհնարին դառնայ: Այո, գիտե՛ք. խորհրդաժողովը որոշել է, ծրագրել, վճռել է: Բայց մենք, որ ծանօթ ենք բուլշևիկական որոշումների, ծրագրերի և վճիռների ճակատագրին, մենք որ գիտենք, թէ ինչպէս նրանք հարեւրներով ու հազարներով գրուում և զննում և ճշտաբարակուում և մուսացում են՝ հարկ չենք համարում առաջիմ դրադել նրանցով, քանի նրանք գեռ գործ չեն դառել և ցաւում ենք սակ, չեն էլ դառնալու:

Գարով խորհրդային իշխանութեան քաղաքական «ամրացմանը», որ կապիտալիզմի կայունացման՝ շարիքը մեղմող պարագաներից ամենագլխաւորն է, մենք նրա մասին երկարացնելու կարիք չունենք: 1921 թուից սկսած

<sup>1)</sup> Ռ. Կ. Կ. (ը.) 14-րդ հոնֆերենցիայի բանաձեւերը էջ 33.

1) Ibid 34. A.R.A.R. @

այդ իշխանութիւնը թէք մակարդակի վրայ ընկած դունտի պէս թաւաւը զոր զիջումը—զիրումի է գնում Սկզբում զիրում գիւղացիներին, յետո՛յ՝ բանւորներին, այնուհետեւ ալ ասքին աշխարհին։ Ամեն մի զիջումը յետոյ խորհրդային իշխանութիւնը կանգ է առնում և յետադարձութեմ է դա իր վերջին նահանջն է, բայց չի անցնում մի քանի շաբաթ կամ ամիս՝ և դուք տեսնում էք, որ նահանջը վերսկսում է և այն էլ նախկինից աւելի մեծ թափով։ Առաջ զիջումները կատարւում էին միայն անտեսական գետնի վրա, յետոյ նրանք թեւակոխեցին և քաղաքականութեան ստարգրը։ Բոլշեւիկները, որ երկու տարի առաջ նոյն իսկ կուսակցական գեմինկատայի մասին չէին ուզում լսել, այժմ ստիպւած են դեմնկատիա հաստատել անկուսակցական բանւորութեան և մինչև իսկ գիւղացիութեան համար։ Եւ այս ամենը կոչւում է խորհրդային իշխանութեան կամ բոլշեւիկեան դիկտատուրայի «ամրացում»։ «Ամրացում» են կոչում նաև միջազգային կապիտալին ու բուրժուական պետութիւններին արւած այն զիջումները, որոնք, ինչպէս Գր. Ե. Կի նախորդ համարում տեսա՞ք՝ յանգան Ղեկնի կազմած «Նշխուտաւորների Գեկլարատիոնի» աղձատմանը և Լոկոսմոնքերեան յեղաշրջման ամենակարեւոր սկզբունքների վտարմանը խորհրդային Բուսաստանի սահմանադրութիւնից...

Ըպիրոսի թափաւորը՝ Պիրոս՝ իտալական արշաւանքի ժամանակ, Աթուրում մտ, իրտա Ժանր կորուստների գնով յաղթելով հուսակցիներին՝ բացականչում է՝ «Մի այսպիսի յաղթութիւն էլ—և ես կորած եմ»։ Ոչ նուազ իրաւունքով այսօր բոլշեւիկները կարող են գոչել։ Խորհրդային իշխանութեան «ամրացումն» մի երկու այսպիսի տարիներ էլ—և այլևս հետք չի մնայ այդ իշխանութիւնից...

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ինչպէս խորհրդային Միութեան անտեսական կենտրոնը, նոյնպէս և քաղաքական կենտրոնը, զարգացումը գնում է միանգամայն «կայունացող կապիտալիզմի» պահանջների համաձայն։ Տեստեսական կենտրոնը կապիտալիզմը զարդ ու փշուր է անում «համոզելով միացորդները», իսկ քաղաքական կենտրոնը աստիճանաբար ամրացնում—և այս անգամ առանց շակիտի — այն իրաւակործը, առանց որի նա չի կարող սարկել և զարգանալ։ Այդ պատճառով էլ ոչ միայն պարզ ձամարտակութիւն, այլ ուղղակի անհանձնութիւն է ասել, թէ «կապիտալիզմի կայունացումը» հնարկաւորում է խորհրդային Միութեան անտեսական զարգացմամբ, կամ խորհրդային իշխանութեան քաղաքական ամրացմամբ։

Սակայն ի՞նչ է հետեւում այս բոլորից այն, որ կապիտալիզմը ոտքի կանգնելով և յաղթական ընթացքի մէջ իր թափը գնելով նաեւ խորհրդային երկրների վրա, պէտք է անարգել հաստատել իր սիրապետութիւնը աշխարհում։

Ամենեւին։  
 Կապիտալիզմը իր կործանման սաղմը իր մէջ է կրում նրա կայունացման և զարգացման իւրաքանչիւր քայլի հետ կայունանում և զարգանում են այն հաստ-

րակական ուժերը — արդիւնաբերական աշխատաւորներ — որոնք նրա գերեզմանափորները պէտք է դառնան և միաժամանակ կատարելագործւում են այն զէնքերը — արդիւնաբերական միջոցներ — որոնք հնարաւոր պէտք է դարձնեն կապիտալիստական անտեսագործութիւնը և նրա վրա հիմնած հասարակական կարգը աւելի՛ բարձր ձեւերով փոխարինելու։

Առողջ կապիտալիզմի քայքայումը համաշխարհային պատերազմի հետեւանքով՝ կազմալուծել, ուժամտփ էր արել աշխատաւորութիւնը և կանցքել արդիւնաբերական միջոցների կատարելագործումը։ Այդ պատճառով էլ բոլոր փորձերը արհեստական Տրասպորտներով համոզարհային յեղափոխութիւն առաջ բերելու և այն էլ ընկերվարութիւնը իրագործելու ծրագրով — հէնց այդ գլխից դատապարտւած էին վիժման։

Այժմ մենք հանդիսատես ենք թէ ինչպէս կապիտալիզմի կայունացմանը զուգահեռ կազգուրում եւ օտքի են կանգնում նրա գոյութեան հիմունքները կրծող ուժերը։ Համբուրգը ի մի համախմբեց այդ ուժերը, Մարսելը և յետագայ ժարսէյնները պիտի կազմակերպեն նրանց պայքարը և ցոյց տան, թէ ինչ ուղիներով պէտք է ընթանան նրանք՝ իսկական ընկերվարին յեղափոխութիւն առաջ բերելու և կապիտալիզմի փլուտակների վրա միջակայային ընկերվարութեան զբօշը պարզելու համար։

Ով փոխանակ այստեղ տեսնելու կապիտալիզմի գերեզմանափորներին՝ Բուսաստանի ստեպներէ, Մոնղոլիայի անապանների և զալմուխական հիւղերի մէջ և նրանց որոնում, կամ ով փոխանակ արդիւնաբերական միջոցների կատարելագործման հետ կապելու իր ընկերվարական յոյսերը, սոցիալիզմ «տեղծելու» ցնորքների յետեւից է ընկնում, նա, կը նշանակէ, վերջին դարու ընկերվարին շարժումներից օչինչ չէ սովորել և օչինչ չէ սուսացել։

Յ. ԱՍՄԱՆԵԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՍՄՈՒՍԸ

(Ինկնակենսագրութիւն)

Հայաստանի Կոմկուսը — կոմունիստական կուսակցութիւնը — հանդիսանում է Համառուսական Կոմկուսի մի մասնաճիւղը և Հայաստանի բարձրագոյն իշխանութիւնը։ Գեղազործիւմ, Ժողովուրդ — դրանք բոլորը ենթակա մարմիններ են՝ հլու կամակատարը Կոմկուսի կ.կ.—ի կամ՝ բոլշեւիկեան խուճուղը բարբառով՝ Հիկիկի.—ի։

Ի՞նչ է ներկայացնում իրենից այդ Կոմկուսը։ Այս հարցին հետաքրքրական պատասխան է տալիս Հիկիկի.ի պաշտօնաթերթ «Կոմունիստ» անագիրը իր Սո 2—ում։ Ահա այդ ինքնակենսագրական տեղեկութիւնները։

Նախ մի քանի թիւեր։  
 1924-ին Կոմկուսի իսկական անդամների թիւն էր 1824,

Այնուհետև քննութեան է դրւում օրակարգի 3—րդ կէտը, որ վերաբերում է Ուշադիզարելի Համաձայնագրին Յանձնաժողովի մշակած բանաձեւը ներկայացնելու համար խօսք է առնում ընկ. Թոմ Եօ (Անգլիա): Հռետորը համառատ պատմութիւն է անում այն պաշտարների որ մղել է միջազգային աշխատուորութիւնը 8 ժամանց աշխատանքի օրը հաստատելու համար, մինչև Վերսալի դաշնագրերը, որը այս խնդիրը միջազգային օրէնսդրութեամբ կորպուսարելու պահանջն է արտայայտում: Այս պահանջի հիման վրայ, 1921—ին Ուշադիզարում գումարւած Համաժողովում ստորագրւում է մի Համաձայնագիր. որը օրական 8 ժամանց կամ շաքաթական 48 ժամանց աշխատանքի սկզբուէքը պարտադիր է դարձնում բոլոր երկրները համար Թէև այդ Համաձայնագիրը անգահացուցիչ է, որովհետև նրա ոչիւ երկրագործութեան և ծովագնացութեան աշխատուորների վրայ չէ տարածւում, բայց նա էլ դեռ հաստատութիւն չէ դաշ թուր կառավարութիւնների կողմից: Համաձայնագիրը ներկայումս հետեւեալ վիճակի մէջ է. — Չեխոսլովակիան, Բուլգարիան, Յունաստանը Հնդկաստանը, Ռումանիան, Լատուիան և Աւստրիան վաւերացրել են այն որոշ վերապահութիւններով: Բելջիկան, Չիլի, Սպանիան և Ելեզիան վաւերացնելու կարիքը չունին, որովհետև նրանք ինքնաբերաբար ընդունել են 8 ժամանց աշխատանքի օրէնքը: Ֆրանսան հաստատել է Համաձայնագրին այն պայմանով, որ Գերմանիան էլ էոյնն անի: Վերջին Հաշւով գլխաւոր խոջընդոտը Համաձայնագրին՝ Հանդիսանում են Անգլիան և Գերմանիան: Սրանց ընդդիմութիւնը խորտակելու համար, հարկաւոր է, որ ընկերվարական Ինտերնացիոնալը ձեռք ձեռքի աւած Արհեստակցական Ինտերնացիոնալի հետ, լճուսական պայքարի մտեն:

Ընկ. Եօի արասայտած վերջին միաբեր աւելի ևս շեղւում են Չեխոսլովակիայի, Աւստրիայի և Լեհաստանի ներկայացուցիչները, որոց յետոյ խօսք է արւում Արհեստակցական Ինտերնատիոնալի քարտուղոր ընկ. Մարտեհայնի: Վերջինս մի կրակոտ ճառով կրճատեց և Ուաշինգտոնի Համաձայնարին բացայայտ կամ ջոզարեւած ձեւով ընդդիմացող կառավարութիւնները և նրանց զէմ մշիկիք պաշարի կարգախօսը լրացնում երկու առաջարկով, առաջինը՝ որ 8 ժամեայ աշխատանքի օրէնքը տարածել անխտիր բոլոր աշխատաւորներին վրայ և ապա՝ որ Աշխատանքի Տնչութիւնը վերակազմուի այնպէս, որ այդ օրէնքի խախտելը փաստօրէն անհրաժեշտ գտնայ:

Ճակատանքի ցանկը փակած լինելով՝ նախագահ քուէարկութեան է դնում յանձնաժողովի բանաձեւը, որ միաձայնութեամբ ընդունում է (1):

**Ե. ՆԻՍՏ**

Ժամը ճիշտ 3-ին (26 Օգոստ.) բեմ է բարձրանում ընկ. Վանկերփիլը, այս նիստին նախագահելու Համար Համագումարը լրտնկայս ողջունում է Ինտերնատիոնալի վաստակաւոր գործչին, որ իր նախարարական պաշտօնի պատճառով ամբաստանակ ստիպւած է հեռու Քեպ ինտերնատիոնալի գործերից: Այս Համակրական ցոյցի Համար իր շնորհակալութիւնը յայտնելուց յետոյ՝ նախագահը խօսք է աւելի ընկ. Գրեյքէրիին՝ օրակարգի երկրորդ կէտի մասին (գործադրութիւն և ն) յանձնաժողովի բանաձեւը ներկայացնելու Համար:

Ընկ. Գրեյքէրը Համօռտակի թւում է այն զժտութիւնները, որ պէտք է յաղթահարէր յանձնաժողովը, այս բանաձեւը մշակելիս և առաջարկում է ընդունել այն:

Ընկ. Պանկէն (Ամերիկա) և ընկ. Դիաման (Գերմանիա) Հարկ են Համարում առանձնապէս շեշտել, որ առաջարկեւած բանաձեւը լոկ իրատմիջոց է գործադրութեան չարիքի զէմ, և որ այդ չարիքը հիմնովին կը վերանայ միայն այն ժամանակ, երբ կապրատիտտական Հասարակարգին կը փոխարինէ ընկերվարութիւնը:

Ընկ. Գոլլան անգլիական աշխատաւորական Գոտակցութեան կողմից առաջարկում է բանաձեւի մէջ լրացում մտցնել այն իմաստով, թէ պատերազմական Հատուցումները և պարտերը խտրող դեր են կատարում գործադրութեան մէջ, Հոնեւարար պէտք է Հատուցումները նապագայի իջեցնել, իսկ պարտերը փոխադարձաբար ջնջել: Այս առաջարկը հիմնաւորելու Համար, խօսք է առնում Ընկ. Ուիլերմ (Անգլիա) որ մի կողմից պարզում է այս խնդրի նշանակութիւնը անգլիական աշխատաւորութեան վրայ տարիներէ ի վեր մշտնադի պէս ծանրացած գործադրութեան անսակեանց, իսկ միւս կողմից վեր է հանում այն քառքը, որ նա առաջացնում է շահագրգռած ազգերի փոխարարելութիւններին մէջ: Յիշատակելով Շեքսպիրի այն խօսքը, թէ՛ բարիք անօղը ոչ միայն ստացողին է բարձրացնում այլ և իրեն՝ Ուիլերմը բացակայելու է. «Պատերազմական Հատուցումները ոչ միայն Հատուցանողին են վնասում այլ, և ստացողին»:

1) Տեղի անձկութեան պատճառով ստիպւած ենք Համագումարի բանաձեւերը յետաձգել Դրօշակի յաջորդ Համարին:

Նկատի ունենալով, որ Հարցը դերակցորէն քաղաքական ընդթ է կրում, նախագահն առաջարկում է յղել առաջին յանձնաժողովին: Այս առաջարկը հիմնաւորելու Համար, ամբիտն է բարձրանում ընկ. Գրեյքէրը, որ շեղեցով անգլիական առաջարկի վրէժի նր և այն ծանր հետեւեցները, որ կարող են առաջանալ նրա ընդունելուց կամ մերժելուց, խնդրում է տեղիացի ընկերներին Հնարաւորութիւն ստլ որ Ինտերնատիոնալը Հանգամտօրէն զբաղի նրանով, մի բան որ անհրաժեշտ է Համագումարի նիստի մէջ:

Անգլիացիները, աղբւած Գրեյքէրի Հաշտարար խօսքերից, Համաձայնում են իրենց առաջարկը առաջին յանձնաժողովին դրկիււ, որոց յետոյ երկրորդ յանձնաժողովի բանաձեւը ընդունում է միաձայնութեամբ:

Նիստի վերջին մասը յատկացում է երկու նոր բանաձեւի քուէարկութեանը. առաջինը, որ վերաբերում է ընկերվարական կանանց շարժման նպատակներին և մեթոդներին՝ (օրակարգի չորրորդ կէտ) ներկայացնում է ընկերուհի Պոպ (Աւստրիա), իսկ երկրորդը, որ արկղումարութեան խնդրին է շօշուփում (օրակարգի վեցերորդ կէտ), ներկայացնում է Ընկ. Իոյլը (Աւստրիա): Սրկու բանաձեւերն էլ ընդունում են առանց վիճարմութեան:

**Զ. ՆԻՍՏ**

Առաւօտեան այս նիստը, որ բացւում է ընկ. Վիլբրատի (Հոլանդիա) նախագահութեամբ, (27 Օգոստոս), ներկում է մանր խնդիրների կարգադրութեան:

Վեցերորդ յանձնաժողովի (այլ և այլք) առաջարկութեամբ, քուէարկում է ընդունում է մի բանաձեւ, որ հրահանգում է ընկերվարական կուսակցութիւններին՝ պայքար մղել հիւճախտի դէմ, որ առանձնապէս պատուհասում է բանւորական զանգւածներին, շնորհիւ նրանց նիթական կեանքի վատ պայմաններին:

Հինգերորդ յանձնաժողովի առաջարկով (կազմակերպական Հարցեր), Համագումարը մի շարք փոխութիւններ է մտցնում կազմակերպական կոնտակտի մէջ: Հաստիութիւն է պնտում նաև յաջորդ Համագումարը 1927ին Հրանիբրու առաջարկը:

Յայտարարւում է նախագահութեան կողմից Հ. Յ. Գաշակցութեան առաջարկը քրդական Հարցի մասին:

Թելալորութիւններ են լինում Ընկ. Գրոմբախի (Փրանսա) և Ընկ. Ուիլերմի (Անգլիա) կողմից ընկերվարական մամուլի վիճակը բարելաւելու Համար, որոնք ընդունում են ի փրտութիւն:

Վերջապէս կարգուցում են մի բանի Հեռուդրներ. և մէկ նամակ խտուացի Հանրապետական Մարիօ Բերգանօի կողմից, սրով վերջինս Հանրապետականների և ընկերվարականների Համադրալութեան տնչարձեշտութիւնն է վեր Հանում՝ Փոշիզմի ուժը խորսակելու Համար:

**Է. ՆԻՍՏ**

Նիստը բացւում է նայն օրը կէսօրից յետոյ ժամը 4-ին Պօլ Փօրի (Փրանսա) նախագահութեամբ: Քննութեան է դրում օրակարգի առաջին կէտի մասին յանձնաժողովի մշակած բանաձեւը Ընկ. Վիլբրատ (Հոլանդիա) յանձնաժողովի կողմից բացատրութիւններ է աւելի այն գլխաւոր տեսակէտա-

ների մտին, որոնք ընկած են առաջադրած բանաձևի հիերուս:

Յաջորդաբար խոց են առնում ընդ ընկ. Լենգերըն (Անդլիս) Բրայդայ (Գերմանիա), Լէոն Բիւմ (Պրուսիա), Տուրատի (Ռուսիա) և Դը Բրիւքէր (Քիլիկիա). բոլորն էլ իրենց պարտաւասակամութիւնն են յայտնում կուսելու խաղա. դռնան թշնամիներէ դէմ, և իրենց հիացմունքն են արտու. յայտում հանդէպ այն Համերաշխութեան, որ Իտաերնասիոնայի հատուածները Հանդէս են բերում միջազգային խաղադուրթիւնն սպահովելու խնդրում:

— Խաղադուրթիւնն այլուս հետք չէ մեզանից. մենք քայլ առ քայլ մտնում ենք նրան Անգլիական Մշտատաւորական Կուսակցութեան կողմից եւ ամբողջ օրտով ուղչունում եմ նրա տիրապետութիւնը աշխարհին վրայ — ասում և Լենգերընը:

— Այլ եւ չպէտք է խօսիլ ժառանգական թշնամիների մտին: Մեր մէջ չկան այդպիսիները: Մենք ամենքս էլ սոցիալիստներ ենք. լցւած նոյն Հաւատով և նոյն յոյսերով, վրայ է բերում Բրայդայը:

— Հոյակապ տեսարան է Իտաերնասիոնայի բոլոր հատուածները այն կատարելա Համաձայնութիւնը և կատարելա ներդաշնակութիւնն այն ժամանակ, երբ մեր շուրջը կառավարութիւնները փոխադարձ տնօրսակութեամբ են լցւած իրար հանդէպ — բացառելով և Լէոն Բիւմը:

— Թէեւ բանաձևը շատ էլ մարքսիստական չէ-յայտարարում է Տուրատիի մի շարք կուսակցութիւնների լիտորութեամբ-բայց և այնպէս նա երկու ձևերով ստորագրում եմ նրա տակ:

— Վերջապէս — ասում է Դը Բրիւքէրը — խաղադուրթիւնը մենք չպէտք է ստանաք իբրև մի ետք, այլ մենք ձեռք պէտք է բերենք այն մեր կամքի, աշխատաւոր դասակարգի կամքի ուժով: Այս կամքը պէտք է յաղթանակի բնանհրահանգութեան, ճիշտ այնպէս, ինչպէս որ, խօսելով Անասուլ Պրանի լեռով, ծառը կանաչում է գարնանը:

Ճանաթի թարգմանութիւնից յետոյ, քէտարութեան է գրւում բանաձևը, որ ընդունւում է միաձայնութեամբ և ամբողջ որտե՞ր միահամուռ ծափահարութիւններով:

Սրանից յետոյ որոշում է նայն օրը մի նիստ ևս կուսակցի Լամպուսարի աշխատանքների աւարտելու համար:

Ը. ՆՆՄՏ

Ընկ. Լենգերընը բացում է այն դիւերային նիստը ճիշտ փամբ 10-ին: Իբրև երկրորդ նախագահ՝ նրա կողքին սեզ է գրւում Փրանսական կուսակցութեան քարտուղարը, Պոլ Փոր, Քենտութեան է գրւում Մարտիի խնդիրը: Ընկ. Բէսաէյրո (Սպանիա) ներկայացնում է աւաջին յանձնաժողովի մշակած բանաձևին այս խնդրի մասին: Ուժգին խօսքերով նա խաբանում է սպանիական և Փրանսական կառավարութիւնների աշխարհակալական ձգտումները Մարտիի նկատմամբ և պահանջում, որ Իտաերնասիոնային իր ազգուս միջամտութեամբ վերջ դնի այդ խայտառակութեանը:

Բանաձևը ընդունւում է միաձայնութեամբ:

Ընկ. Պերրար (Քիլիկիա) առաջապակում է յաջորդ համագումարի օրակարգի մէջ դնել գաղթային խնդիրը, որ

այնքան մեծ նշանակութիւն ունի միջազգային խաղադութեան համար:

Նամագումարը Հաւանութիւն է տալիս այս առաջադիւն: Իբրև օրակարգի վերջին խնդիր՝ քննութեան է գրւում Արեւելեան Եւրոպայի վերաբերեով բանաձևը: Յանձնաժողովի կողմից ընկ. Օտտո Բուուէրը (Աւստրիա) հանդէս է գալիս մի հրակապ ձուռով, որի մէջ նախ բացատրում է, թէ զիւս ևս մտքերի զգացումների ինչ մեծ տարբերութիւններ կան Իտաերնասիոնայի մէջ այս խնդրի շուրջը և թէ որքան դժւար է եղել մի յայտարարել բերել աւարտութեամբ արմատաւորութիւնները: Այնուհետև նա վերլուծում է յանձնաժողովի առաջարկած բանաձևը և աշխատում ապացուցել, որ եթէ այդ բանաձևը իր մանրամասնութիւնների մէջ շատերին չի կարող գրահանել, այնուամենայնիւ նա պէտք է իր շուրջը համախմբէ ամբողջ Իտաերնասիոնայը, որովհետև նրա հինգում ընկած են հետեւեալ չորս արժեքաւոր առաջադրութիւնները. —

1. Պաշտպանել աւստր վերապահութեան բոլոր նորակարգ պետութիւնների անկախութիւնը:
  2. Ողջունել չինական, հնդկական և մահաթական աշխարհի աշխատաւոր գահագանների գաղթութիւնը և պաշտպան կանգնել նրանց ազատագրական պայքարին:
  3. Պահանջել բոլոր ճնշւած ազգերի ինքնորոշման իրաւունքը:
  4. Դատարարել կառավարական տեսորը, որտեղ էլ նա հանդէս գալու լինի, իբրև քաղաքական կռիւ միջոց:
- Բուուէրի կրակոտ ձուռը Համագումարի մեծամասնութեան կողմից շարունակ ընդարտւում է ծափահարութիւններով: Բանաձևի քէտարութիւնից առաջ, ընկ. Դը Բրիւքէրը (Քիլիկիա) իր և 11 ուրիշ կուսակցութեանց անունից, (որոնց թուումն է և Ն. Յ. Իսլանդիցութիւնը) յայտարարում է, որ նրանք աւարտութիւններ շատ ունին բանաձևի դէմ, բայց և այնպէս մեծամասնութեանը միտնում են՝ Իտաերնասիոնայի միակամութիւնը չխաթարելու համար:
- Բանաձևը գրւում է քէտարութեան և ընդունւում բոլորի կողմից, բացի Ռուսաց Սոցիալիստ Սեպտիմբրականներից, որոնք ձեռնպահ են մնում:

Համագումարի աշխատանքները աւարտած լինելով՝ Լենգերընը Իտաերնասիոնայի կողմից շնորհակալութիւն է յայտնում Ֆրանսական կուսակցութեանը, Մարտիի շրջանի կազմակերպութիւններին և Համագումարի թարգմանիչներին ու գործադարներին որքան ջանք էին լինալու նրա աշխատանքները դիւրացնելու համար: Վերջում նա հրապարակ է առնում Համագումարի անդամների, ցանկութիւն յայտնելով որ երկու տարուց յետոյ նրանց հանդիպել Լոնդոնում:

Վերջին խօսքը պատկանում է Ֆրանսական կուսակցութեան ներկայացուցչին: Պոլ Փորը խօսում է մեծ ոգեւորութեամբ: Նա յիշեցնում է այն երկիւղը, որ ունէին ամէնքը Իտաերնասիոնայի նախադարձ վերաբերմամբ Համաշխարհային պանդորայի միջոցին և նրանից յետոյ: Այսօր այդ երկիւղները արդէն փարատւած են: Այսօր փաստ է, որ պատերազմը չկարողացաւ արհան հեղեղի մէջ խեղդել սոցիալիզմը: Սոցիալիզմը վերածնունդ է յաղթանակ: Եվրոպական ձեռքերը վերջնականապէս միացած են Համաբարից ք վեր, և այսօր ընկերավարական մեծ ընամարդ-տիրացի է իր օջա-

իմնև Ո՛չ ժընկուր (Ազգերի Լիգան), ո՛չ Մասկվան մեզ չեն քաշում: Մենք այն ենք, ինչ որ ենք: Մենք զիտենք ուր ենք գնում: Մենք գնում ենք զէպի իսկական Ազգերի Դաշնակցութիւնը, որ միջազգային սօցիալիզմի Դաշնակցութիւնը պիտի լինի: Բոլոր երկիրներն ընկերներ, տարէք ձեզ հետ ընկերվարական ժրտանայի եղբայրական սղջսլջի:

Հետտարի վերջին խօսքերը խնամում են *Ինտերնացիոնալիզմ*ի գոռ հնչելեններով, որ գուրս են ժայթքում հարիւրաւոր յուզած սրտերից:

Գլշիրայ ժամը 1 1/2-ին Համագումարը յայտարարում է փակուած:

**ՅԱՆՉԵՆԱԺՈՂՈՎԱՆՅԵՐ**

Մարտէլլի Համագումարի այս տեսութիւնը շատ ազօտ, շատ սխտմտիկ պատկերն է ներկայացնում այնպիսի կատարած աշխատանքների. որովհետև եման Համագումարների մէջ իսկական, օրգանական աշխատանքը կատարում է ոչ թէ հրապարակային նիստերում, այլ յանձնաժողովների մէջ: Այստեղ է, որ տեսակետները բազում են իրար, այստեղ է, որ քրոնաջան աշխատանքի միջոցով կուսակցութիւնները հաստատում են այն միջին գրութիւնները, որոնք շուրջը համախմբում է Ինտերնացիոնալը, և որոնք միայն իրենց վաւերացումն են ստանում Համագումարի հրապարակային նիստերում:

Գծարխտարար «Դորալ»ի էջերը չեն թոյլատրում յանձնաժողովներում կատարուած աշխատանքը ներկայացնել մեր ընթերցողներին Մի ընդհանուր պատկեր միայն տալու համար կարող ենք ասել, որ երանք աշխատում էին զիշեր և ցերեկ: Նրանցից ոմանց նիստերը տեսում էին մինչև զիշերայ ժամը 3-ը և այն էլ ոչ թէ մի կամ երկու անգամ, այլ բաւական յամբար Աշխատանքների ներսում թնօսան (ինտերնաշոն) մտային զարգաբար տալու համար բաւական է յիշատակել, որ, ինչպէս Ընկ. Հնդկերպընն էր ասում Համագումարի փակման ձառի մէջ, միայն մի յանձնաժողովում և մի նիստի ժամանակ արտասանուած ձառերը, թարգմանութիւնների հետ միասին, հարիւր քսանից անցնում էին... Կոմունիստական Ինտերնացիոնալի շրջանակներում, ուր մարդիկ վարժուել են, որ առաջ բուշելիկների կուսակցութեան Կ. Գոմբանչն որոշում էր կայացնել այս կամ այն խելովի մտային, իսկ նրանց ձեռնասուն օտարերկրեայ կուսակցութիւնները առանց առարկութեան կլլեն այդ որոշումները— այս պրօցիդուրը անկասկած զարմանք պիտի շարժի բայց այստեղ, արտա ըմբռնումների և անխաչկանց համոզմաների այս մրցադաշտում, զա ջաա բնական և անխուսափելի մի բան է նկատուում հանրապարադիր տեսակէտներ մշակելու համար:

Առանձնապէս բուսն էին պայքարները սուաջին, երկրորդ և Արեւելեան Եւրոպայի յանձնաժողովներում: Ասաջինում վէճը գտնում էր իսպազուութեան խնդրի մարքոնուսական և ոչ-մարքոնուսական ըմբռնման շուրջը, երկրորդում՝ պատերազմական հատուցմաների և պարքերի շուրջը, սրի առթիւ սուր բաղխում է տեղի ունենում անգլիական և ֆրանսական տեսակէտների միջեւ, իսկ երրորդում՝ բուշելիզմը անկերպասօրէն թէ վերապահօրէն զատապարտելու

խնդրի շուրջը: Բնական է, որ այս պայմաններում հուսուած բանաձեւերը փոխադարձ զիշուանքների արդիւնք լինելով՝ չեն կարող լրովին գոհացնել բարբրին: Բայց բարբրի համազմուռէ գով էլ բնանցից ամեն մէկը իր հետապնդած նպատակի տեսակէտից մի խոշոր քայլ է հանդիսանում զէպի առաջ: Այս յառաջարկումութիւնը դիտարոյապէս յանձնաժողովների յոգնաջան աշխատանքի արդիւնքն է կոչուում:

**ԻՈՐԱՐԿԱԺՈՂՈՎԱՆՅԵՐ**

Համագումարի ընթացքում տեղի ունեցան մի շարք մասնակի խորհրդածողութիւններ, որոնք նպատակն էր մշակել այն հարցերը, որոնք թէև օրակարգի մէջ չեն դրուած, բայց իրրև միջոցային գործուկցութիւն պահանջող խնդիրներ՝ կարտո են ուսումնասիրութեան:

Այս խորհրդածողութիւնն էին.

1. *Ընկերվարական կանանց խորհրդածողով*: Մրա նպատակն էր պարզել այն սպեցիֆիկ աշխատանքները, որ պիտի կատարեն Ինտերնացիոնալի մէջ կազմակերպուած մատուց հարիւր հոգար կանայք՝ ընկերվարական շարժումը տարածելու և խորացնելու համար: Խորհրդածողովի մշակուած տեսակէտները համապատասխան ձեւակերպութիւն գտան մի բանաձեւի մէջ, որ ինչպէս վերեւը տեսանք, համագումարը իրապրեց հնդկերպը նիստի մէջ:

2. *Հոդուային (ագրարային) խորհրդածողով*: Զբաղուած էր այն հարցով, թէ ինչ միջոցների պէտք է դիմեն կուսակցութիւնները՝ զէլզայիական զանգուածները զբաւելու գործում: Նկատի ունենալով այս հարցի անասհման կարեւորութիւնը ընկերվարութեան յաղթանակի համար՝ որոշուած է խելիւր Դործարդի Գօմիտէին, որ եա յաջարկ համագումարին հոդուային հարցը զին օրակարգի մէջ՝ նախապէս ի մի համախմբելով և կուսակցութիւնների մատակարարելով նրա ուսումնասիրութեան համար անհրաձեւա նիթիւրը:

3. *Ընկերվարական դաստիարակութեան խորհրդածողով*: 1924 թ.ին Հանուկերում (Գերմանիա) հիմնուած է Ընկերվարական Դաստիարակութեան Ինտերնացիոնալը՝ նպատակ ունենալով աշխատաւորների զաւակներին դուրս կորզել բուրժուական դպրոցի այլատեւող ազդեցութիւնից և ընկերվարական աշխարհաստիպացով կրթել: Մեր կուսակցութեան կողմից այդ աշխատանքին մասնակցում է. Ընկ. Ա. Արեղուհան: Սակայն այս մի սուրաւ ընթացքում ջաա քիչ կարգ մակերպութիւններ են բերել իրենց զարմակցութիւնը նորա կողմ՝ Ինտերնացիոնալին Սոյն խորհրդածողովի նպատակն էր կպպեր հաստատել զանազան երկրների կուսակցութիւնների հետ, որպէոդի Ա. Ը. Ինտերնացիոնալի աւաջիկայ համագումարին (1927) զուգահեւ կարիւր լինի Ընկերվարական Դաստիարակութեան Ինտերնացիոնալի Համագումար ևս կայացնել: Այս նպատակով Խորհրդածողովին մասնակցող պատգամաւորներից ամեն մէկը պարզում է, թէ իր երկրում ինչ վիճակի մէջ է գտնուում ընկերվարական դաստիարակութեան գործը և թէ ինչ կոնկրետ միջոցների պէտք է դիմել այս հոդի վրայ միջազգային գործակցութիւն առաջ բերելու համար:

4. *Ընկերվարական մանուշի խորհրդածողով*: Մրա նպատակն էր ներկայայնել ընկերվարական մասուրի վիճակը զանազան երկրներում և պարզել այն ընդհանուր միջոցները,

որոնցով կարելի է ընկերվարական թերթերի բովանդակու-  
թիւնը ձևափոխել, նրանց հրատարակութիւնը ամանացնել և  
տարածումը ապահովել: Պարզում է, որ մամուլի գործը  
յուսպողի ձեռով կազմակերպում է Գերմանիայում, ուր 167  
ընկերվարական օրաթերթերը 110 տարաբանու և հինգ միլիոնի  
հասնող «դիրամոյով» նրբավան հատույթ աղբիւր են հանդեպ-  
նում, և համեմատաբար վատագոյն ձեռով Անգլիայում, ուր  
մի հատիկ ընկերվարական օրաթերթ կայ՝ «Daily Herald»,  
մաս 350,000 բաժանորդով: Մամուլը վիճակը բարելաւելու  
առաջարկները հասարակ թիւղարկութիւնների բնոյթ են կրում,  
որոնք միայն ժամանակի ընթացքում կարող են գործ դառնալ  
նախ շահագրգռած կուսակցութիւնների ամանակի համաձայ-  
նութիւններով, ապա թերեւս նաև Ինտերնասիոնալի պարտա-  
ղիւր որոշումներով:

\* \*

**ԲԵԼՃԻՆԵՍԻ ԸՆԿԵՐՎ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**  
**ՔԱՌԱՆԿՄԱՆՍԵՆՆԵՐ**

Անցեալ ամի 15-ին Բելճիքական կուսակցութիւնը կա-  
տարեց իր հիմնադրութեան քառամանաւայ յօդուաներ: 1885  
թ-ին բանւորների մի փոքրիկ խմբակ ներկայացնող այս կու-  
սակցութիւնը այսօր ունի 624,238 անդամ: Վերջին (1925 թ.  
Ապրիլ) խորհրդարանային ընտրութիւններին նրա շահած  
քէտներթիւնը հաւասար է 820,650-ի կամ բոլոր քէտ. երի 39.44  
տոկոսին: Նրա ներկայացուցիչները թիւն է Խորհրդարանում՝ 78  
(187-ից) Մերակոչումը՝ 59 (153-ից) և կառավարութեան  
մէջ՝ 6, որոնցից մէկը-ընկ. Վանդերվելը փոքր-վարչապետ և  
արտաքին գործերի նախարար: Նրա ազդեցութեան շրջանա-  
կում է գտնուում բելճիկական Արհեստակցական Միութիւնը  
594,998 անդամով և աշխատաւոր պատանիների կազմակեր-  
պութիւնը շուրջ 35,000 անդամով: Իր մամուլով, որ ներ-  
կայացնում է 8 օրաթերթ, 29 շաբաթաթերթ, 7 երկշաբա-  
թաթերթ, 29 ամսաթերթ և 7 տարեգիրք, բելճիկական կու-  
սակցութիւնը գերմանականից շուտը համեմատած կուսակցու-  
թեան մեծութեանը առաջին տեղն է բռնում:  
Այս է պատճառը, որ բելճիկական կուսակցութիւնը,  
չնայած իր համեմատական փոքրութեանը, առաջնակարգ տե-  
ղերի մէջն է բռնում Ինտերնասիոնալի մէջ:

Յօդուանին մասնակցելու համար Ինտերնասիոնալի հաւա-  
ւածները շատերն ուղարկել էին իրենց ներկայացուցիչներին,  
որոնց թիւը 40-ից անցնում էր: Հ. Յ. Պաշնակցութիւնը իր  
ողջոսին արտապաշտութիւնը բերու այս տանին մի յատուկ  
պատգամաւորութեամբ, բաղկացած ընկ. ընկ. Վ. Մարտիկ-  
եանից, Ա. Ջամայեանից և Վ. Սարգսեանից:

**ԹՈՒՐԻՔԻՈՅ ԸՈՒՐՋԸ**

«Իսլիֆայութեան մասին տրուած որոշումն է վեր,  
Մուսթաֆա փաշայի օգապարիկը սկսու ձակիլ, և այդ օրէն  
ի վեր կ'իջնայ »:

Այս տողերը գտնուել էին Լութֆի Փիքրի պէյի յիշա-  
տակներուն մէջ, և քիչ քան որ խեղդիկապ անցնելու տային  
անոր վզէն: Քիւրտ փաստաբանը, որ բանից անցողակի, աւելի  
շատ թխամոյ գրայք-բրայք մըն է, անդիկ և անկարագրել,  
շարունակելով իր տեսութիւնները, անխուսափելի կը գտնէր

Իթթիհատական գիտակ մը՝ Մուսթաֆա Քեմալի գլխուն, իբրև  
տրամաբանական ելքը դէպքերու ներկայ ընթացքին:

Եւ իսկապէս, ոչ ոք օրէն, աւելի ճիշտ՝ քրտական ապըւ-  
տամբութեան պայթումէն և թուրք «խռովարտ»ներու դառն-  
ի վեր, հանդիստ չունին «Վազինե» ու իր զօժակիցիները: Գա-  
տնելու մաս հաճախները կը շարունակուին տակաւին, լրաե-  
ներու և զգուտնի գործակողներու ամբողջ բանակ մը որով  
շունեկու պէս կը հետադիպէ հակառակորդները «Թուրարտ»-  
ներէն տատնուէլ յայտնի դէմքեր կախադան հանուցեան էն-  
կիրիի մէջ: Բայց, երկուսը, կապածը որդի պէս կը բանին:  
Մէկ վաչրիեանի թուրքիւնը կրնայ գրիվվայր շրջիլ ամէն բան:  
Ահա թէ ինչու՝ որտեւ թափով սկսած են «նորոգել»,  
չեղաշրջել թրկիւր, տնարդիւով և մէկիկ նետելով շատ մը  
աւանդութիւններ, հռչակաւոր Ֆէտէն մինչև փաթթոցները,  
որոնք դաւադրութեան բոյներ կը համարուին: Փակուցեան  
թիֆիները, կուր պիտի մղուի աւատապետութեան դէմ, որ  
Թուրքիոյ գոյութեան խորխորը կը կազմէ այսօր: Մուսթաֆա  
Քեմալ ինք անձամբ օպոնտի էլաւ, զլիարիով, գարձի բե-  
րուելու համար Գաութեմուլին գիւղացիները, որոնք ոչ միայն  
մեծ մասով փաթթոց կը կապեն, այլ և շին ըմբռներ Ֆէսը  
առանց եւազմայի կամ իւրի: Եւ, կրնաք երեւակայել թէ  
որքան «յապաւշ կրթեցան» Ինէպոլտի խեղճ գիւղացիները,  
լսելով սա տեսակ խօսքեր:

— «Ընկերներ, անիմաս բան է քուրմական տարագր իրել նե-  
րէն: Քաղաքակիրք աւերահին հարգած միջազգային տարագր աս յար-  
մար է մեր ազգին, մեմն ալ այդ նուագրը պիտի հազդիմ: Հագուստը  
ո՛ր է և սարքերու թիւն չունի կօշիկէն, ինչպէս այս վերջինք սարքե-  
րու թիւն չունի «պոմուռա՛նէ կամ «ճարա՛նէ կամ «տոկոսիկ»նէ: Այս  
նուագրը նուագրն ալ բնականաբար կը դէմ առնարգիլ գլխանց  
մը. աւելի բաց խօսելով՝ գլխարկ մը: Տակաւին վարանդներ  
կան: Այդ կարգի սգեմետուն կը հարցնեն — Ինչու՞ սնարմար կը  
գտնիլ գլխարկ դներ, երբ ո՛րեւ անպատեմարին չէ՛ սեմեր նելէնէն:  
կան մէս դնելուն մէջ: «Ճիւպպէ»ն բիւզանդական կայսրութեան տան  
գործածուած է ևս յատուկ է նրա յախմաներուն:

Նոյն քարոզը նաև կ'ինքուռն.  
— Ճարտողութեան ընթացիկն սեւալ որ կ'ինքուր՝ հաստ օղորդով  
և մեծ գրուութեամբ ծածկած են իրենց երեսերը: Ասիկա անվայել  
է մեզի: Կ'ինքն ալ պէտ է բանան իրենց երեսները, աւերանք ու  
դէպքեր սեմելու նամար:

Եւ ամէն տեղ, և իւրաքանչիւր խօսքի հետ, «Վազին»  
յատկապէս կը շեղուր թէ պէտք չէ վախելու այս նորու-  
թիւններէն, թէ սղէտաներ, սպուշներ և խաղբեաներ են ոչ  
միայն վարմանները, այլ և իսլիֆաները, «որոնք յանդգնա-  
թիւնը կ'ունենային պիղզիւս թէ իրենք Աստուծոյ շուքը և  
մարգարէին փոխանորդն են»:

Անուշտ որ անտիւրքիաց է այս շարժումը՝ Թուրքիոյ  
բորբոսած պտտութեան մէջ: Բայց շարժման մղիչ ազդակը  
այն է որ, քէմալական իշխանութիւնը սարսուղի մատուած  
է նոր Մարտ 31ի մը հռուակարէն: «Օղապարիկը սկսած է  
ձակիլ», և իբրև հակազդեցութիւն կամ հակաթայն, ուրիշ  
ելք չկայ, բայց եթէ կուրը հասցնել իր տրամաբանական  
վախմանին: «Մի վախնաք» խօսքը արտասանած ստին,  
Մուսթաֆա Քեմալ կը խոստովանի թէ սակաւին նոր զոհեր  
պիտի տան: Բայց կը նախընտրէ այդ ճամբան, քան արդի  
վիճակը, որ «յամուսութեան և մուսուսակութեան արդիւնք է  
և եթէ շարունակուի, ամէնքս ալ ամէն վաչրիեան ազգակէքի  
A.R.A.R.®

ոչխարներ դառնալու ուղղունայիքին տակ պիտի գտնուինք և չպիտի ազատինք»:

Կարճ.— ձեռնոցը նետուած է արդէն, կազարի պէս ծանր և ունոր չափ վտանգաւոր: Պարագ սոնը չէ որ ԲՆՈՒՓ պէյ, նախկին վարչապետը, խոստովանաբար յայտնեմ է թէ աշուարսափի տակ են բոլորը, այսինքն իր ընկերները, Տիւն և նոր իթթիշատականները կամ Թալէէն Հեռացողները: Մուսթաֆա Քէմալի ստեղծագործութիւնն էր այդ խոստարգէտ կազմակերպութիւնը, Թալը (ժողովուրդ), բայց հետզհետէ նորանալով և մաղուելով, այսօր դարձեր է անոր անձնապահ գուղըր, քաղաքական գետնի վրայ: Միայն վստահիկները, կրկին և կրկին փորձուած հաստատարիները տեղ տւին անոր մէջ, և անոնք ալ, իրենց կարգին, կախարդուած են միևնույն հնազանդէն ու աշուարսափէն, գաղիքէն...

Ուրիշ, աւելի քան երբեք Պարզիցոյ ճակատագրին տէրն է Էնկերիբն, ներքին և արտաքին ձակաոյի վրայ: Կախազանները ակեցոյցին ընդդիմադիր հասանքը, որ իր պատեռնին մէջ քաշուած է արդէն, մինչեւ ցնոր տնօրինութիւնն Եւ, առ ույժ՝ անմիջական վտանգ չտեսնելով, օրտան վարչիները կը ձգնին բակելի դիմադրութեան բոլոր լայնները: Մէկ ձեռքով կը նետեն Քէմալն և փաթթոյնները, ահաբեկելով ամբողջը, միւս ձեռքով նոր տարածարեւութիւններ կը փորձեն այդ միևնույն ամբողջ օգերտելու համար: Այս է Մուսթաֆա Համալի յարցուած իրարմոնցումին մէկ պատճառը: Զինուորական յաղթանակ մը այդ ձակաոյն վրայ՝ կրնայ բարձրացնել Քէմալի աստղը, որ բուսական մթնոցնած է, հոկաւսակ արտաքին ակնախիտի փայլելուն:

Այսպէս, ուրեմն, «Կադի»ն կը շաշիցնէ մտրակը ամէն ուղղութեամբ, թէ ժողովուրդը քաղաքակրթիւնը և ուրդիացընելու, և թէ իր սպառնական տոնր պահելու համար: Եւ արդիացման, ոչխարահականացման արտաքին ձեւերը հրամանագրած տանն, չի մտնոր նոր ճեղքեր բանալ փոքրամասնութեանց աջ կամ ձախ կողմն վրայ, առանց ո՛րեւէ դիմադրութեան հանդիպելու: Ո՛չ-թուրք զպրոցները հեռացնուէ աւելի կը սեղմուին, առտու մը շիւտահոյճ ըլլալու համար. կարուածները—Անատուրի մէջ՝ եկեղեցիներն ու վանքերն ալ-ձախու կը հանուին. այսօր ալ ձեռնարկած են մականունները սրբազրիւր, «եռն»ը «օղլու» դարձնելու, ինչ որ նուազ յեղափոխական քայլ չէ...

Փուրք վարիչները աւելի խոհեմ կ'երեւային, երբ շուրջարբ տափառի փոխուած չէր: Կը թուի թէ քանի կը մտենան ևս. բողբոսական ձեւերուն, այնքան կը մերկանայ իրենց ներքին էութիւնը.— քանզի և արիւնուոյս:

# ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## Հ. Յ. Դ. ԵՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցնող ամառը Հ. Յ. Դաշնակցութեան արտասահմանի կազմակերպութիւններուն համար եղաւ շրջանային ժողովներու շրջան մը: Մէկը միւսի ետեւէ գումարուեցան Ամերիկայի, Մուրաւսի, Յունաստանի, Ռումանիայի, Ռուսաստանի շրջանային ժողովները, որոնք զբաղեցան կուսակցութեան միասնաց գործունէութեան գնահատութեամբ և նոր շրջանի ծրագրերներու մշակութեամբ:

Երջանային ժողովներու շարքը բացեցաւ Ամերիկայէն, որու 32-րդ պատգամ. ժողովը տեղի ունեցաւ 1925 թ. Յուլի 27 —Յուլիս 4—ին. Ժողովին կը մասնակցէին 75 կուսակցականներ, 4 շրջանային խորհուրդներ, Կեդր. Կոմիտէն և խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուած ընկերներ: Օրակարգի նիւթ կը կազմէին զիւրցում 10րդ ընդհ. ժողովի մասին, Կեդր. Կոմիտէի միամեայ գործունէութեան քննութիւնն ու գնահատութիւնը, բանաւոր ու զբաւոր պրօպագանդի, ինչպէս նաև կուսակցական գոտախորհրդան հարցերը, յառաջիկայ տարւան գործունէութեան ծրագրերը, մի շարք կազմակերպական հարցեր, նախահաշիւ, ընտրութիւններ և այլն:

Շրջանային ժողովի աշխատանքներու ընթացքին ստացուեցաւ Երեւանի Հեղափոխութեան Երջ. Ժողովը միաձայնութեամբ ընդունեց հետեւեալ բանաձեւը.

«Նկատի ունենալով, որ փութորիկն ու Հեղեղը անպատում աւերներ գործած են Երեւանի և շրջակայ վայրերու մէջ, Հ. Յ. Դ. Ամերիկայի 32-րդ Պատգամ. Ժողովը իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ ազգետնի հայրութեան և կ'որոշէ կոչ ուղղել ամերիկահայ գաղութին, օգնութեան հասնելու ազգետնակներուն:

Պատգամ. Ժողովը կը յանձնարարէ Կեդր. Կոմիտէին հանգանակութեան սկզբի ի նպաստ ազգետնակներուն՝ բանալով «Հայրենիք»ի մէջ նուիրատուութեան սխեմա և իր կողմէ տրամադրելով 1000 դոլար»:

Այս վերջին որոշումը արդէն իսկ գործադրուած է: «Հայրենիք»ի մէջ բացուած է հանգանակութեան յատուկ սխեմա, որ առ 27 Օգոստոսի աւած է 4,238 դոլար, որմէ 3000 դոլար արդէն Մերձաւոր Արեւելքի նպաստամատուցի կեդրոնի միջոցով փոխադրուած է Երեւան, Հայ Կարմիր Թաշի Կեդր. Մարմնի ձեռքով Հեղեղէն ֆրոնտած տնձերու պետքերուն գործածելու համար:

Յուլիս 6-ին գումարեցաւ Յունաստանի Երջանային Ժողովը, որ մանրամասն քննեց Միկուսի Կոմիտէի և շրջաններու զեկուցումները և ընդունեց բանաձեւ յառաջիկայ գործունէութեան համար: Ընդհանուր առմամբ, անցեալ տարւայ գործունէութիւնը նկատուեցաւ գուհունակութեան արժանի: Օրակարգի յատուկ կէտերէն մէկը կը կազմէր յունահայ գաղութի կազմակերպման խնդիրը, ինչպէս նաև Հայաստանի վերաշինութեան օժանդակելու հարցն ու Հօլի-ի գործունէութիւնը: Ժողովը հանգամանօքէն զբաղեցաւ պրօպագանդի ու նոր սերնդի դաստիարակութեան գործով: Առանձնապէս ընդգծեց այն երեսմիջը, որ երիտասարդութիւնը ամէն ուղղամբօրէն փարած է մեր կուսակցութեան: Եկող տարւայ գործունէութեան ծրագրին ու նախահաշիւը կազմելէ և ընտրութիւնները կատարելէ ետք, ժողովը փախուեցաւ Յուլիսի 10-ին:

Սուրիոյ 6-րդ Երջանային Ժողովը տեղի ունեցաւ Յուլիս 27 — 9 Յուլիսին: 16 պատգամաւորներու, Քիւրդի ներկայացուցչի և 5 հրաւիրուած ընկերներու մասնակցութեամբ 17 նիստերու ընթացքին ժողովը լսեց Կեդր. Կոմիտէի և շրջաններու մանրամասն զեկուցումներն ու հարեւտութիւնը, բազմակողմանի քննութեան ենթարկեց անցեալ գործունէութիւնը և դժեց յետագայ աշխատանքներու ուղղութիւնը: Կոմիտէի միամեայ գործունէութիւնը և հաշիւները գտնուեցան

ընդհանուր առումով զոհացուցիչ: Այստեղ ևս յուրջ քննութեան առարկայ եղաւ նոր սերնդի գաստիրարութեան հարցը: Սուրբով մէջ գոյութիւն ունեցող այլ քաղաքական կուսակցութիւններու նկատմամբ Շրջ. ժողովը որոշեց, մինչեւ յոյժ 10-րդ Ընդհ. Ժողովի որոշումներէն, որ է, փրկել բազմութիւնները կորուստէ և աշխատութե, ուժ տալ ներգաղթիին ղեկի երկիր, զորի տալ տարազրկ զանազաններու քաղաքական գաստիրարութեան և անտեսական զարգացման, որդէսփանսնք ըլլան մշակոյթով հասուն և նիւթապէս պարհազ: Դաշնակցութիւնը պիտի ըլլայ գաղութի տն բոլոր կենսունակ տարբերուն հետ, սրանց մտքին ու սրտին մօտ են այդ նպատակները: Շրջ. ժողովը երկարօրէն զբաղեցաւ և ազգային հանրային կազմակերպութիւններու, հարկեանկացական միութիւններու և դպրոցական-հանրակրթական հարցերով: Որոշուեցաւ աջակցել ազգային ընտրովի մարմիններու ստեղծման և, առհասարակ շրջանի ազգային-մշակութիւնի կազմակերպման գործին, ինչպէս նաև դպրոցներու բարեկարգման ու ժողովրդականացման նեւու մնալով զուտ կրօնական-եկեղեցական խնդիրներէ և չմանակցելով Գիրիկիոյ կաթողիկոսութեան ու Երուսաղէմի պատրիարքութեան միջև միւս պաշտօնի Սուրբիան իրենց ազդեցութեան տակ աւանդու դիտարկութեամբ՝ մեր կուսակցութիւնը ոչէորք է մասնակցի ազգային-ժողովրդական ու կրթական այն բոլոր գործերուն, որոնց նպատակն է ժողովրդական լայն զանգաճներու բարեկեցութիւնն ու յառաջդիմութիւնը: Սուրբով քաղաքական կացութիւնն աչքի առաջ ունենալով՝ «վարել շատ փոփոխական և ջրջահայտաց քաղաքականութիւն տեղական ազգաբնակչութեանց և ոսնոք ձգտումներու հանդէպ», ուշադրութեամբ հետեւելով մեր ժողովրդի ֆիզիքական ու անտեսական ավազովութեան: Առհասարակ, Շրջ. ժողովը ցոյց տուաւ, որ մեր կուսակցութիւնը խոր արմատներ ձգելով Սուրբահայ գաղութի մէջ՝ պարճած է անոր ազգային ազգակը:

Ռուսանկոյ 5-րդ Շտրանային Ժողովը բացեցաւ Յուլիսի 17-ին և իր աշխատանքները աւարտեց Յուլ. 23-ին: Ժողովին կը մասնակցէին կողմնին և ջրջաններու պատգամաւորները, ինչպէս նաև խորհրդակցական ձայնով հրաւիրած ընկերներ: Շրջաններէն ներկայացաւ զինուորամերէն պարզեցաւ, որ կուսակցական մարմիններու հանրային գործունէութիւնը եղած է բաւարար, բայց զուտ կազմակերպական աշխատանքներու մէջ նկատուած է թերացում: Շրջ. ժողովը մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձուց նոր սերնդի գաստիրարութեան հարցը և ջրջանի զբաւոր ու բանաւոր պրօպագանտի գործը: Մեկուսի կոմիտէի գործունէութեան զինուորումը ընկել է կարթ մը կազմակերպական խնդիրներ լուծելէ ետք՝ Շրջ. ժողովը երկարօրէն զբաղեցաւ գաղութներու կազմակերպման և ներգաղթի խնդիրներով: Նոր արաւայ գործունէութեան ծրագիրն ու նախահաշիւը կազմել է ընտրութիւնները կատարելէ վերջ, ժողովը փակեցաւ Ռուսանկոյ կազմակերպութեան համար եռանդուն գործունէութեան ջրջան մը բանաւոր առաջադրութեամբ:



— Յունիսի 21-ին տեղի է ունեցած Թուրքիի Արամեան զարդոյի հրապարտութեան ընտրութիւնը Բոլշեակները՝ միացած տեղին հակադաշնակցականներու և «Թաներու» հետ, ահա-

զին ջանք են թափած և խոշոր զուտներ են ծախսած իրենց թեկնածուներու ընտրութիւնը ազգակցութեան համար: Սրբիւնքը.— 200 ընտրակողներէն անոնք շահած են միայն 40 քէտ. 149 ձայնով ընտրուած են Դաշնակցութեան թեկնածուները: Այս ընտրութիւնները յատկանշական են Հիւսիսային Պարսկաստանի հայ գաղութին ղեկի խորհրդային իշխանութիւնը տաճած զգացումները հասկնալու տեսակէտով:

— Յուլիսի 26-ին, Պէլլութի մէջ, կատարուած են Լիբանանի Ազգային Գաւառական Ժողովի ընտրութիւնները: Քէլարիութեան մասնակցած են 1495 ընտրողներ: Ընտրուած է Ն. Յ. Դաշնակցութեան ցանկէն 4 հոգի և հակառակորդներու միացեալ բոքէն՝ 1:

**Լ. Յ. ԳՐՇԵՆԿՅԱՅՈՒԹԻՒՆԸ**

**ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ Ի ՀՄԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Դաշնակցութիւնը Մարտէլի Համագումարին 11 պատգամաւոր տալու իրաւունք ունէր, բայց նա կարողացաւ ուզարկել միայն ութ հոգիից մի պատգամաւորութիւն՝ կազմած հետեւեալ ընկերներից Ժամկոչեան Յ., Զամարեան Պ., Միսաքեան Ե., Շանթ Լ., Շուշանեան Վ., Զամարեան Ա., Վրացեան Ս., Տէր-Մինասեան Ռ.:

Համագումարի բոլոր յանձնաժողովներին մէկ-մէկ ձայնով մասնակցելու իրաւունք ունենալով՝ ընկերները բաժանել էին աշխատանքն իրենց մէջ հետեւեալ ձևով.

Ա. Յանձնաժողով (Ընկերպարութեան միջազգային խաղաղութեան քաղաքականութիւնը) ընկ. Շանթ Լ., Միսաքեան: Բ. Յանձնաժողով (Աշխատութեան կենսի պայմանները և գործազրկութիւնը) ընկ. Շուշանեան:

Գ. Յանձնաժողով (Ռաշխցողին համաձայնագիրը և 8 մասնայ աշխատանքի օրը) ընկ. Զամարեան:

Դ. Յանձնաժողով. (Կանանց կոնֆերանսի մասին զեկոցում և առաջադի) ընկ. Ժամկոչեան:

Ե. Յանձնաժողով (Կազմակերպական և անդամաւորի հարցեր) ընկ. Զամարեան:

Զ. Յանձնաժողով (Չնախատեսուած հարցեր), ընկ. Ժամկոչեան:

Է. Յանձնաժողով (Արեւելեան Եւրոպայի հետ կապուած հարցերը), ընկ. ընկ. Զամարեան, Վրացեան և Տէր-Մինասեան:

Համագումարի ընթացքում տեղի ունեցած խորհրդածաղիներին մասնակցում էին հետեւեալ ընկերները.

Ընկերվարական Գաստիրարութեան Թորհրդաժողով. — ընկ. Շանթ:

Ընկերվարական Մամուլի Թորհրդաժողով — ընկ. Վրացեան և ընկ. Տէր-Մինասեան:

Հողային Հարցի Թորհրդաժողով. — ընկ. Վրացեան:

Ընկերվարական Գանանց Թորհրդաժողով ընկ. Զամարեան: Արեւելեան Եւրոպայի Թորհրդաժողով (մասնաւոր) ընկ. ընկ. Զամարեան, Վրացեան և Տէր-Մինասեան:

Դաշնակցութեան պատգամաւորութիւնը այս Համագումարի համար յատուկ չափական առաջադրութիւններ չունէր, որովհետեւ այն բանաձեւերը, որոնք ընդունուած են Համալորդի Համագումարում և Գործադիր Կոմիտէի ժողովում (Լիւցերն), միանգամայն գոհացուցիչ եղանակով ձեւակերպում են մեր սրբուն քաղաքական պահանջը, քանի հրապարտուած էլ չկար

մի քաղաքական անմիջական հարց, որով հարկ զգացւոյ էր այս  
Համագումարն զբարեկեցելու:

Բայց և այնպէս, այս Համագումարում Հայաստանն  
առանց յիշատակութեան չմնաց: Արեւելեան Եւրոպայի գործե-  
րին վերաբերեալ բանաձեւում երկու անգամ յիշատակուած է  
մեր երկիրը: Մի տեղ նրա բռնադատուած ռուս բոլշեւիկներին  
կողմից ցուցադրուած է իբրև օրինակ բոլշեւիկեան աշ-  
խարհակալութեան, իսկ միւս տեղը շեղուած է նրա անկա-  
խութիւնը վերականգնելու պահանջը:

Իրբեւ օրւայ հրատապ խնդիր՝ Դաշնակցութեան պատ-  
գամաւորութեանը զբարեկեցում էր քրդական հարցը: Թէեւ  
պատգամաւորութիւնը չէր անդիտանում այն խոշոր չարիք-  
ները, որ Քրդերը անցեալում հացերի են մեր ժողովրդին,  
բայց և այնպէս նա չէր կարող անտարբեր մնալ Քրդերի  
բնաջնջման ճրագի հանդէպ, որ հետագանում է՝ քէմալական  
Տաճկաստանի՝ իր պտեմութեան արշաւի առջեւ չ'ցցուած  
այդ խոշոնկոտը ևս վերացնելու համար: Եւ որովհետև քիւրդ  
ժողովուրդը ներկայացուցիչ չունէր Խնտերնաօրինակի մէջ  
իր բնաջնջման հաւարը լսելի դարձնելու համար՝ չ'Դաշնակ-  
ցութեան պատգամաւորութիւնը որոշեց թարգման հանդիսա-  
յալ հարեան ժողովրդի տառապանքներին:

Այս նպատակով պատգամաւորութիւնը հետեւեալ դիմումն  
ուղղեց Համագումարին.—

Ընկերներ,

Այն ժամանակ, երբ Ընկերվարական Խնտերնաօրինակի  
Համագումարը բնեւում է զանազան երկրներում եղած պատե-  
րազի կհանդիպոյրինները, Փոքր Ասիայում տեղի են ունե-  
նում այնպիսի դէպքեր, որոնք անխնայաբար զատերազմի  
փոսնել իրենց մէջ են կրում:

Հայ ժողովրդին բնաջնջելուց և Յոյներին Փոքր Ասիայից  
վտարելուց յետոյ, այժմ թիւրք ազգայնական կուսակաւորութիւնը  
սկսել է Քրդերի ուշխանման գործը, որպէսզի Փոքր Ասիան  
մի միապալազ թիւրքական երկիր դարձնէ և պանթուրանա-  
կան գաղափարի յարթանակն ապահովէ:

Իր գոյութիւնը այս անխնայ քաղաքականութեան դէմ  
պաշտպանելու համար քիւրդ ժողովուրդը մի քանի ամիս  
առաջ պատգամութեան դիմեց: Թիւրք կուսակաւորութիւնը  
չչապաղեց հրի և սրի սակ առնելու քրդական ազգաբնա-  
կութիւնը:

Ներկայումս կուռ առաջին շրջանը վերջացած է. թիւրք  
զօրքերը դուռել են քրդական գաւառները, և պատերազմա-  
կան պատարանները զործի վրայ են: Արդէն շարժման առաջ-  
նորդները աւելի քան 200 հոգի կախած են, բազմահազար  
անմեղ տղամարդիկ և կանայք կտառւած և նրանց բնակա-  
վայրերը աւերած:

Սա չէ նշանակում սակայն, թէ քիւրդ յեղափոխական-  
ները իրենց ժողովրդի ազատագրութեան զործը լքել են:  
Ապստամբները շարունակում են իրենց կռիւը Անատոլիայի  
շրջաններում, և այնտեղ դեռ շատ արիւն պիտի հոսի, մինչեւ  
որ թիւրքական կուսակաւորութիւնը կարողանայ դրութեան  
տէրը կր դառնալ:

Այս հանգամանքներն աչքի առաջ առնելով՝ Դաշնակ-  
ցութեան պատգամաւորութիւնն առաջարկում է.

1. Վճռականօրէն բողոքել այն խժոժութիւնների դէմ որ  
թիւրք ազգայնական կուսակաւորութիւնը գործադրում է Քիւր-  
դիստանում՝ իր ապստամբեան համար մարտնչող այս ժող-  
ովուրդը ոչնչացնելու համար:

2. Ցանկնարարել հասնապատասխան երկրների ընկերվա-  
րական կուսակաւորութիւններին՝ իրենց ազդեցութիւնը գործադրել  
Ազգերի Լիգայի մէջ, որպէսզի վերջինս, ազգերի ինքնորոշման  
սկզբունքի հիման վրայ, քիւրդ ժողովրդի ազատ կենանք  
ապահովէ:

Համագումարի դիւանը, այս դիմումն ուղարկել էր Արե-  
ւելեան Եւրոպայի գործերի յանձնաժողովին: Վերջինս որոշեց  
յանձնարարել Փորձագիր Կօմիտէիին, որ հանգամանօրէն  
զբաղի քրդական հարցով:

Այսպիսով այս հարցն առաջին անգամը լինելով դրուած  
է Ինտերնաօրինակի սեղանի վրայ: Եւ նկատի ունենալով այն  
անվերապահ համակրանքը, որ Խնտերնաօրինակի շրջաններում  
սկսուած է ապստամբ գաղտնի մանր ազգերի ազատագրական  
շարժումների հանդէպ, պէտք է յուսալ, որ քիւրդ ժողովրդի  
արդար պահանջն արարածապանք չի մնայ այնտեղ, մանաւանդ  
եթէ նա վերջնականապէս ազատագրի կղերական-առատա-  
կան ազդեցութիւններից և, իր յուսամիտ յեզափոխական  
առաջնորդների հետեւողութեամբ, ժողովրդական ուսմկալար  
կարգերի հաստատումը Քիւրդիստանում իր քաղաքական  
պայքարի նպատակակէտը դարձնի:

Համագումարի յանձնաժողովներում Դաշնակցութեան  
պատգամաւորները մասնակցում էին ընդհանուր հարցերի  
քննութեանը, և մի քանի տեղ նրանց միջամտութեան հե-  
տեւանքով բանաձեւերը փոփոխութեան ենթարկեցին: Առանձ-  
նապէս կենդանի մասնակցութիւն ցուց տւին նրանք Արեւելեան  
գործերի վերաբերեալ յանձնաժողովի մէջ, ուր աշխատում  
էին ցրել արեւմտեան ընկերների մէջ տարածուած այն թիւր  
կարծիքը, թէ բոլշեւիկները յեղափոխականացնող դեր են կա-  
սարում Արեւելեան ժողովրդների կենեցում:

Որովհետեւ այդ յանձնաժողովում խոշոր կուսակցու-  
թիւնների — զլլաւորապէս Գեորգիանի և Անգլիայի —  
ձայների գերակշռութեամբ ընդունւած բանաձեւը չէր գոհա-  
ցնում Դաշնակցութեան պատգամաւորներին, նրանք, ինչպէս  
և Յարմասայի, Բելջիկայի, Նիդերլանդի, Լեհաստանի, Լատ-  
վիայի, Լիտվանիայի, Էստոնիայի, Բուլղարիայի, Վրաստանի,  
Իւզոլապիայի և Յիւլիանիայի ներկայացուցիչները, որոշեցին  
միայն վերապահութեամբ ձայն տալ բանաձեւին՝ Խնտերնա-  
օրինակի առանդական միաձայնութեամբ խախտում է Ընկ. Դը  
Բրիւքէրը (Բելջիկա) վերոյիշեալ կուսակցութիւնների յանձ-  
նարարութեամբ, Համագումարի վերջին նիստին, Արեւելեան  
Եւրոպայի գործերին վերաբերեալ բանաձեւի քէմալութեան  
միջոցին:

Համագումարի աշխատանքներից ազատ ժամերը Փարիզից  
եկած ընկերները օգտագործում էին մեր կուսակցական կազ-  
մակերպական աշխատանքների համար՝ Մարտէյի խմբերում  
և ընդհանուր ընկերական ժողովներում՝ դատախոսելով  
օրւայ քաղաքական հարցերի շուրջը: Միւս կողմից շնորհա-  
կալութեամբ պիտի ընդգծել, որ Մարտէյի ընկերները շուրջ  
չէին խնայում, որպէսզի Դաշնակցութեան պատգամաւոր-  
ութիւնը յաջող կերպով կարողանայ կատարել իրեն յանձնուած  
գործը:

Ճ) Միաձայնութիւնը այնուամենայնիւ չէ կայանում,  
որովհետեւ Ռուս Սոցիալաւա-Յեղափոխականների կուսակ-  
ցութիւնը դրաւոր յայտարարութեամբ իր ձեռնապահութիւնն է  
յայտնում դիւանին: